

«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզի Վայք համայնքի, Սարավան 8-րդ փողոց
2/1 հողամասում արևային ֆոտովոլտային
Էլեկտրակայանի կառուցման ՇՄԱԳ հաշվետվություն
(Լրամշակում)

«Էլիտ Քոնսթրաքշն» ՍՊԸ տնօրենի /ա.



Ա. Կարապետյան
30.05.2024թ.

.....	0
1.....	Error! Bookmark not defined.
2. Հավելվածներ.....	4
3. Օգտագործվող հապավումները.....	5
4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը	5
5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	9
6. Գնահատման հաշվետվության մշակման	10
հիմքերը.	10
7. Նախատեսվող գործունեության վայրը, իրականացման նպատակը.....	10
8.Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը.	11
8.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը.....	11
9. Շրջակա միջավայրի բնութագրերը.....	16
9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	16
9.2. Սեյսմիկա և երկրաբանություն.....	17
9.3. Կլիմա և օդային ավազան	18
9.4. Հողային ռեսուրսներ	25
9.5.Ջրային ռեսուրսներ	28
9.6. Կենսաբազմազություն	29
9.7. Հատուկ պահպանվող տարածքներ.....	34
9.8. Պատմության և մշակութային հուշարձաններ	35
9. 9.Բնության հուշարձաններ	37
9. 10.Սոցիալ-տնտեսական.....	42
10. Նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ, (շահագործման, փակման և հետփակման փուլերում) արտադրական հզորություններ.....	45
10.1 Շահագործման փուլ.....	45
10.2 Շինարարության փուլ.	49
10.3 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.	53
10.4. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	54

11.Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ).....	56
11.1. Օդային ավազան.....	58
11.2. Ջրային ռեսուրսներ.....	59
11.3. Հողային ռեսուրսներ.....	60
10.4. Կենսաբազմազնություն.....	61
10.5. Թափոններ.....	62
10.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	64
10.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ.....	66
10.8. Արտակարգ իրավիճակներ.....	66
10.9. Աղմուկ և թրթռում.....	67
10.10. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.....	68
10.11. Սոցիալական ազդեցություն.....	70
11. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան).....	73
11.1. Օդային ավազան.....	73
11.2 Հողային ռեսուրսներ.....	74
11.3 Ջրային ռեսուրսներ.....	75
11.4. Կենսաբազմազնություն.....	76
11.5. Թափոններ.....	77
11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	78
11.7. Աղմուկ և թրթռում.....	79
11.8. Արտակարգ իրավիճակներ.....	80
11.9. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.....	81
11.10. Սոցիալական.....	83
11.11 Բարեկարգում և Լանդշաֆտ.....	83
12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը/ Մոնիթորինգ/... ..	84
13.Բնապահպանական կառավարման պլան.....	86
14. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր).....	109
15. Հանրային քննարկումներ.....	114
16.Բողոքների ընթացակարգ.....	114

17. Նախատեսվող գործունեության իրականացման նպատակահարմարությունը, հաստատված հիմնադրությային փաստաթղթերին նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.	115
18. Փակման և հետփակման փուլեր.	116
Գրականություն.....	118

Հաշվետվություն	Վայոց ձորի մարզի Վայք համայնքի, Սարավան 8-րդ փողոց 2/1 հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում:
Ձեռնարկող	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ազատամարտիկների շնրք/Տ/ 10 Էրեբունի 0020 Երևան:
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	Վայոց ձորի մարզի Վայք համայնքի, Սարավան 8-րդ փողոց 2/1 հողամաս
Նախագծող	«Նովալ»ՍՊԸ
Հաշվետվություն մշակողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 arm_eia@outlook.com

2. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների Պետական գրանցման

Վկայականները, պետական ռեգիստրը:

Հավելված 2. Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիան:

Հավելված 3. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը:

Հավելված 4. «ՀԷՑ»ՓԲԸ-ի տեխնիկական պայմանը:

Հավելված 5. Հատակագծերը, կոորդինատները:

Հավելված 6. Վայքի համայնքապետարանի ավագանու որոշումը`

համաձայնության վերաբերյալ:

Հավելված 7. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ:

Հավելված 8. Մթնոլորտային օդի արտանետումների հաշվարկ:

Հավելված 9. Վճարման անդորրագիրը:

Հավելված 10. Հնագիտական և պատմա-մշակութային հուշարձանների գնահատման եզրակացություն:

3. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում ՕԳ՝ օդային գիծ

ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր

Վտ՝ Վատտ

ՖՎ՝ ֆոտովոլտային

ՄՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

կՎտ՝ կիլովատտ

ԿՎԱ՝ կիլովոլտ-ամպեր

ՄՎտԺ՝ մեգավատտ ժամ

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք: Օրենքը կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրասահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական

աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպատիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)– Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող

Էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, Էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում Էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

ՀՀ կառավարության որոշումներ

ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն» N 2343 - Ն որոշում:

ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:

ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:

ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թ. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:

ՀՀ կառավարության 08 նոյեմբերի 2011թ. «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» N1396 որոշում:

ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի 1000 Վ Ո ԼՏ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:

ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2006 թվականի «Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշում:

5.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՄԱԳ և ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մայիսի 3-ին ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները) Օրենքը: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի Էներգետիկայի բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող»: Նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանը զբաղեցնում է 6.20356 հա տարածք:

«Էլիտ Քնսթրաքշն» ՍՊ ընկերությանը պատկանող արևային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվել և հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի՝ սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ.

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսացել.

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականը՝ N 21042023-10-0033: Հավելված 1

Գործունեության իրականացման Լիցենզիան: Հավելված 2

Համայնքապետարանի կողմից տրված Ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Հավելված 3

«ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը: Հավելված 4:

Գործունեության իրականացման նախագծային փաստաթղթերը:

7. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ.

«Էլիտ Քնսթրաքշն» ՍՊ ընկերության Արևակայանը տեղակայվելու է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան 8-րդ փողոց, 2/1 հողամաս հասցեում՝ 6.20356 հա տարածքի վրա՝ սեփականության իրավունքով:

7.1 Նախատեսվող գործունեության նպատակը: Նախատեսվող «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի արևային կայանի կառուցման նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է՝

Էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Արևային էներգիան արևի լույսի վերածումն է [Էլեկտրաէներգիայի](#)՝ ուղղակիորեն օգտագործելով կա՛մ ֆոտովոլտաիկա (PV), կա՛մ անուղղակիորեն օգտագործելով կենտրոնացված արեգակնային էներգիա (CSP): Սրանցից վերջիններն օգտագործում են ոսպնյակներ կամ հայելիներ ու հետևման համակարգեր՝ արևի լույսի մեծ չափաբաժինը փոքր ճառագայթում կենտրոնացնելու համար: Ֆոտովոլտաիկան լույսը վերածում է էլեկտրական հոսանքի՝ օգտագործելով [Ֆոտովոլտաիկա](#):

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022թ.սեպտեմբերի 22-ի, №362-Ա որոշման համաձայն՝ «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ԼԷ №0708 Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2044թ.սեպտեմբերի 23-ը գործողության ժամկետով: Ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքն իրականացնել երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

8.ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.

8.1 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Արևակայանը տեղակայված է լինելու «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Մարավան 8-րդ փողոց, 2/1 հողամաս հասցեում՝ 6.20356 հա տարածքի վրա: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է մարզկենտրոնից 35 կմ հարավ-արևելք, [Ղարք](#) գետի ափին: Ռելիեֆը արտահայտված է տեկտոնական խիստ մասնատված լեռներով: Ուսումնասիրվող տարածքը տեղադրված է էյուրվիալ-դեյուրվիալ, այուրվիալ-պրոյուրվիալ նստվածքների վրա:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրված է տեղական ինքնակառավարման մարմինների և հողատարածքի վարձակալի որոշմամբ՝ հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները:

Կատարվել են տարածքի ինժեներատեխնիկական ուսումնասիրություններ՝ «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՄՊԸ կողմից, նախատեսվող գործունեության տարածքի երկրաբանական տվյալների հավաքագրման և համապատասխան հաշվետվության կազմման նպատակով: Այդ նպատակով տարածքում փորվել են 12 հատ հորատանցքեր, յուրաքանչյուրը 2 գծ/մ խորությամբ, ընդհանուր 24 գծ/մ խորությամբ:

Երկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքի կտրվածքներում մասնակցում են միջին եոցենի (Pg22) հասակի հրաբխանստվածքային շերտերը՝ պորֆիրիտները, անդեզիտները, ավազաքարերը: Մեր ուսումնասիրվող տարածքում հանդես են գալիս վերը նշված ապարների հողմնահարված գոտին կավային գրունտների տեսքով, իսկ ցածր հորիզոններում դրանք գետաքարային գլաքարային տեսքի գրունտներն են:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի համաձայն: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է «տաք» կլիմայական շրջանում: Բնորոշ է շոգ ամառը, չափավոր ցուրտ ձմեռը:

Հիդրոերկրաբանական տեսակետից Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող շրջանում տարածված գրունտային ջրերը կապվում են ճեղքային և ծակոտկենային տիպի ծագման և ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների գրունտային ջրերի հետ: Գրունտային ջրերի հոսքեր, հիմնականում հանդիպում են ժամանակավոր հոսքերի տեսքով, ձորակների և գետի հովտում (ցածրադիր տարածքներում): Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 4մ-ից խորը հորիզոններում:

Ֆիզիկատեխնիկական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն բացակայում են:

Շրջանի սեյսմիկ և սեյսմատեկտոնական պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է

I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ :

Շերտ 1: Հողաբուսական շերտ ավազակավի լցոնով: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-2- 82-Ժ-1-ի (9ա) I կարգ է


Շերտ 2: Կավային գրունտ պինդ թանձրության, բացից մինչև մուգ շագանակագույն, սպիտակահողազույն խոնավ, մանրախճի պարունակությամբ 10-15%: Ժամանակակից էլյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-2- 82-Ժ-1-ի (8գ) III կարգ է:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 79սմ:

Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:

Ինժեներատերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Նկար 1



Նախատեսվում է կառուցել 5,000 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլային կայան Տարածքը տեղակայված է տեղակայման աշխարհագրական կոորդինատներն են.

հյուսիսային լայնության 39°42'31.53"N


արևելյան երկարության 45°40'59.98"E,

Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 2032 մետր:

Նկար 2



Նկար 3.



Գործունեության տարածքը Մ-2 միջպետական ավտոճանապարհից գտնվում է 250մ հեռավորության վրա, Վայոց ձորի անտառտնտեսությունից 110մ, մոտակա մակերևութային ջրային հոսքից 1 կմ, բնակավայրից մոտ 1,3, «Անանուն որմնաքանդակ» բնության հուշարձանից՝ 5,1 կմ, Անտառտնտեսության տարածքից՝ 0.6կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրերից մոտ 1,3կմ:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների Գործունեության տարածքում առկա են վայրի խնձորենի, շլորենի, տանձենի, տարածքում կան այլձենու վարդագույն և նարնջագույն տեսակներ, մասրենու թփեր: Կառուցվող տարածքում հաշվառվել է 18 մասրենու, 15 այլձենու, 12 տանձենու և 18 շլորենու տարբեր հասակի և տեսակի թփեր և ծառատեսակներ: **Տարածքում շինարարական աշխատանքներ կատարելու դեպքում կվնասվեն թվով 63 տարբեր հասակի և տեսակի թփեր և ծառեր:**

Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Տարածքում առկա է գրունտային ճանապարհ, գոյություն ունեցող 10կՎ օդային գիծ, որը ՀԷՑ-ի համաձայնությամբ որոշակի տեղաշարժվում է տարածքում: Տարածքում առկա է օդային գծի փայտե հենասյուներ, որոնք փոխարինվում են երկաթ բետոնե հենասյուներով: Առկա է ՀԷՑ համաձայնություն նախագծի վրա ստորագրած տարբերակով:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

9.1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Վայոց Ձորի մարզի Վայք խոշորացված համայնքի՝ Սարավան բնակավայրի վարչական տարածքում: Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի հանրապետության հարավ-արևելքում, սահմանակից է Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի մարզերին, Արցախին, նախիջևանին: Այն իրենից ներկայացնում է բուրբ կողմերից լեռներով շրջապատված թասաձև գոգավորություն՝ բարդ և խիստ մասնատված մակերևույթով՝ ծովի մակարդակից 850մ/Արենի/-3522մ/Վարդենիսի լեռ/ բարձրությունների վրա: Մարզի տարածքը կազմում է 2308կմ², բնակչությունը՝ 50800 մարդ, մարզկենտրոնը՝ Եղեգնաձոր քաղաքն է: Մարզի կենտրոնով է անցնում Մ-2՝ Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրան և Մ-10՝ Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության մայրուղին, Հայաստան-Իրան գազատարը: Ներկայումս Վայք խոշորացված համայնքում ընդգրկված են 16 բնակավայրեր (Վայք քաղաքային և Զառիթափ, Ագատեկ, Փոռ, Մարտիրոս, Մերս, Բարձրունի, Գոմք, Խնձորուտ, Նոր Ագնաբերդ, Զեդեա, Արին, Սարավան, Արտավան, Հերիեր, Կարմրաշեն գյուղական բնակավայրեր):

Գծապատկեր 1




Ռեչիեֆիին բնորոշ են լանդշաֆտի բազմազանությունը, ռեչիեֆի գոտիականությունը և կտրտվածությունը, որով էլ պայմանաորված է ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը: Առանձնացվում են 3 ենթաշրջաններ՝ Արփայի գոգավորություն, Վայքի ծալքաբեկորավոր լեռնաշղթա (ձգվում է հարավում), Վարդենիսի հրաբխային լեռնավահան: Տարածաշրջանի մակերևույթը լեռնոտ է, խիստ մասնատված, կտրտված: Տարածաշրջանը ներառում է Վայքի և Վարդենիսի լեռների արևմտյան հատվածները, որն աչքի է ընկնում իր քարայրերով, ջրհավաք ձագարներով և էրոզիոն գոգավորություններով, ժայռային մնացուկներով, քարափներով ու դարավուլերով: Զգալի տարածում ունեն սողանքները և քարաթափումները; Վայոց ձորի մարզի տարածքի համար բնորոշ են լանջերի ասիմետրիկությունը (հարավային երկար և հյուսիսային կարճ լանջեր): Հարավային լանջերը խիստ կտրտված են, լանջերում տարածված են էրոզիոն և դենուդացիոն պրոցեսները, շատ ակտիվ են սելավները: Տարածքում առանձնանում է Արփայի աջափնյա վտակ՝ Եղեգիսի կիրճը՝ ռեչիեֆի մեծ և խորը (մինչև 1300 մ) մասնատվածությամբ:

9.2. ՍԵՅՍՄԻԿԱ և ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջանի սեյսմիկ պայմանները. Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Հաճախակի են ռեչիեֆային տատանումները և ստորգետնյա ցնցումները: Գրունտների առավելագույն արագացումները մարզի տարածքում տատանվում են 0.2 g - 0.5 g սահմաններում:

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ. «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր»-ի տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.3g$



9.3. ԿԼԻՄԱ և ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Կլիման չոր է և խիստ ցամաքային՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով: Ռելիեֆի փակ գոգավորություններում այն դաժան է՝ հաճախ կրկնվող սառնամանիքային եղանակներով: Ամռանը այստեղ տաք է, համեմատաբար խոնավ: Հաստատուն ձյունածածկույթ չի ձևավորվում: Ամռանը շոգ է՝ միջին ջերմաստիճանը մոտ +300, իսկ առավելագույնը հասնում է +420-ի: Մթնոլորտային տեղումների տարեկան առավելագույն քանակը 417 մմ է՝ հիմնականում անձրևների տեսքով: քամու միջին տարեկան արագությունը կազմում է 1,3մ/վրկ, 25 տարիների կրկնելիությամբ կարող են լինել 19մ/վր արագության քամիներ:

Գործունեության տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները Վայք քաղաքի համար՝ որպես խոշորացված համայնք:

Աղյուսակ 1

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանն, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ	Բացարձակ
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
ք. Վայք	1256	-4,0	-2,2	3,5	10,2	15,0	19,7	23,5	23,4	19,0	12,0	5,6	-0,9	10,4	-20	39

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

Օդի հարաբերական խոնավությունը. %

Բնակավայրի անվանումը	ըստ ամիսների												Միջին տարե կան խոնավո ւթյունը %	Ամենաց ուրտ ամսվա օրի հարաբե րական խոնավո ւթյունը %	Ամենատա ք ամսվա օրի հարաբե րական խոնավութ յունը%		
	1	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII				Միջ ին ամ սա կա ն ժա մը 15- ին	Միջին ամս ական ժամ ը 15- ին
ք.Վայք	77	74	66	63	61	59	52	55	54	64	72	78	65	77	62	52	36

Մթնոլորտային տեղումները

Աղյուսակ 3

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն												Տարեկան	Տեղումների նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը սպրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ		
	ըստ ամիսների																
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր					

Վայք	25	28	36	57	63	45	23	21	15	36	31	31	411	151	260
	22	20	23	36	30	32	34	39	23	29	37	27	39		

Չյան ծածկույթ

Աղյուսակ 4

Բնակավայրի անվանումը	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ Չյան մեջ ջրի սառչման առավելագույն քանակը, մմ	Տարվա մեջ Չյան մեջ ջրի սառչման առավելագույն քանակը, մմ	Գրունտի խորությունը, սմ
1	2	3	4	5
Վայք	65	51	-	-

Քամի

Աղյուսակ 5

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Մնացորդի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ	Հյուսիսին	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

Եղեգնաձոր	18	4	13	11	6	21	10	17							
	Հունվար	1.4	1.3	1.5	1.8	1.6	1.7	1.7	1.4	82	0.5	ՀվԱր	2.4	ՀվԱր	1.7

		15	12	13	15	8	14	13	10						
	Ապրիլ	2.1	1.7	2.1	2.2	2.1	2.5	2.8	2.5	55	1.6				
	Հուլիս	2.8	1.9	2.6	2.4	2.2	2.2	2.5	3.1	48	1.8				
	Հոկտեմբեր	1.7	1.5	1.6	1.9	1.8	2.2	2.4	2.2	69	1.1				


Աղյուսակ 6

Արևափայլի տևողություն

Բնակավայր, օդերևութաբանական կայանի անվանումը	Տևողությունն ըստ ամիսների, ժամ												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Վայք	134	135	154	158	220	290	330	306	269	218	169	132	2515

Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ տարածաշրջանը գտնվում է չափավոր կլիմայական գոտում, 1200-1600մ բարձրությունների վրա ամառը՝ տաք է, խոնավ, միջին ջերմաստիճանը հուլիսին կազմում է 16°C-ից մինչև 20°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 45-60%, բարենպաստ քամիների միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ձմեռը չափավոր ցուրտ է, թույլ քամիներով և օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C-ից մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 50-70%, քամու միջին արագությունը կազմում է 3.0-5.0 մ/վ:

Նկար 4.



Օդային ավազան. Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի [Գլխավոր \(armmonitoring.am\)](http://armmonitoring.am) էլեկտրոնային կայք էջի՝ 2022թ. 4-րդ եռամսյակի հրապարակված տեղեկագրում շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների, Վայոց Ձորի մարզի և քաղաքների օդային ավազանի որակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Իսկ Հայէկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի 1 ըստ բնակչության թվաքանակի համաձայն օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները ժամկետանց են: Այնուամենայնիվ ներկայացվում է.

Ըստ «Էկոմոնիթորինգ» ձեռնարկ-ուղեցույցի՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Սարավան բնակավայրը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

9.4. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Համաձայն Վայոց Ձորի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի՝ մարզին բնորոշ են բնական լանդշաֆտները, կիսանապատներն ու տափաստանները: Գերակշռում են լեռնա-դարչնագույն անտառային հողերը, լեռնաշագանակագույն և մարգագետնա-տափաստանային հողերը և լեռնային սևահողերը, արմատական ապարների ելքերը: Լեռնա-դարչնագույն անտառային հողերը բնութագրվում են դարչնագույն գույնով, հզորության խորը շերտով, հումուսի բարձր պարունակությամբ: Մարգագետնա-տափաստանային տիպիկ հողերը բնութագրվում են բարելավված ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային

ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ: Տարածքի լեռնային սևահողերն ունեն ծանր կավաավազային կազմ, առանձին ըստ ծագումնաբանական հորիզոնների տարբեր քիմիական բաղադրություն, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից: Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Այս տիպի հողերում երկար ժամանակ տեղումների բացակայությունը հանգեցնում է հողի ճաքճքմանը:

Լեռնաշագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, ունեն մակերեսային քարքարոտություն: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Նկար 6




Վայքի տարածքի հողային ծածկույթը խիստ աղքատիկ է: Քաղաքից հյուսիս-արևելք և հարավ-արևելք ընկած տարածքները ներկայացված են խիստ կտրտված թեք լանջերով, գուրկ են հողային ծածկույթից, իսկ մնացած տարածքներում եղած հողային ծածկույթը փոքր հզորության է և ներկայացված է բաց շականակագույն հողերով, հիմնականում խիստ էռոզացված:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է [ՀՀ](#)

[Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի](#) և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «[ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրաման](#)ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն «Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայք էջի՝ 2022թ. Վայոց Ձորի մարզի հողային ծածկույթի որակի վերաբերյալ ներկայացված է հետևյալ տեղեկատվությունը:

Գծապատկեր 2.



Գծապատկեր 128. Որոշ մարզերի հողային ծածկույթում մետաղների պարունակությունը, 2022թ.

9.5. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Վարդենիսի բարձրավանդակից սկիզբ առնող Արփա գետն է, որը մարզի տարածքում ունի 92 կմ երկարություն և ունի 2080մ² ջրհավաք ավազան: Արփա գետն ունի բազմաթիվ վտակներ, որից ամենախաշորը Եղեգիսն է: Վայոց Ձորի մարզի բոլոր գետերն ունեն սրընթաց հոսք, հարուստ են էներգետիկ պաշարներով: Այն հարուստ է վտակներով, որոնք տեղ-տեղ առաջացնում են սահանքներ և ջրվեժներ, որոնցից են Ջերմուկի (Ջրահարսի ջրվեժը) և Հերհերի ջրվեժները: Ամենախոշոր վտակը Եղեգիսն է: Տարածքում առկա են նաև 6 փոքր լճեր և լճակներ, որոնք ունեն բնապահպանական և հանգստի գոտու նշանակություն, Ջերմուկի տաք, ածխաթթվային հիդրոկարբոնատա-սուլֆատա-նատրիումային հանքային ջրերով:


Արփա գետի ջրերի մի մասը Սևանա լիճ հասցնելու համար կառուցվել է 48 կմ երկարության Արփա-սևան ստորգետնյա ջրային թունելը, որը սկիզբ է առնում Կեչուտի ջրամբարից: Մարզը հարուստ է նաև հանքային ջրերով:

Վայքի տարածքով հոսում է Արփա գետը, որը սկիզբ է առնում Վարդենիսի և Ջանգեզուրի լեռնաշղթաների միացման կետից՝ 3200մ բարձրությունից, հոսում է հիմնականում նեղ կիրճով, երբեմն ողողահունը լայնանում է, օրինակ՝ Վայքի տարածքում:

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Նկար 7

ՀՀ մակերևութային ջրերի որակը
հուլիս / 2022 թվական




Համաձայն [Գլխավոր \(www.armmonitoring.am\)](http://www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի/2022թ. 4-րդ եռամսյակի տեղեկագիր/Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև նոյեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից վերև, Վայք քաղաքից ներքև և Եղեգնաձոր քաղաքից վերև նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «վատ» (5րդ դաս): Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքի հատվածում նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

9.6. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶՈՒԹՅՈՒՆ

Լանդշաֆտային բազմազանությամբ պայմանավորված՝ շրջանին բնորոշ է բուսական աշխարհի բազմազանությունը: Վայոց ձորի մարզի բուսական աշխարհը, ընդգրկված է Իրանական ֆլորիստիկ շրջանի մեջ, որի գերիշխող տիպերն են կմախքային լեռների քսերոֆիլ (ֆրիգանա և տոմիլյարներ), քսերոֆիլ-տարախոտային և տրագանտային լեռնային տափաստանը, որոնք շրջապատում են քսերոֆիլ ու սակավազուրկ անտառային բուսականությունը:

Նկար 8



Բուսական աշխարհ: Վայոց ձորի մարզի ֆլորան ներկայացված է 92 ընտանիքի և 423 ցեղի 1774 անոթավոր բուսատեսակներով, որոնցից անտառային էկոհամակարգերում հանդիպում են 75 ընտանիքի 237 ցեղի 649 բուսատեսակ:

Նկար 9



Ֆլորայի կազմում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հազվագյուտ և անհետացող տեսակները, էնդեմիկ տեսակները, ինչպես նաև ինվազիվ և էքսպանսիվ տեսակները:

Ֆլորիստիկ շրջանի կիսանապաստային գոտուն հատուկ են քարքարոտ լանջերին աճող ֆրիգանային (լեռնաչորային) բուսականությունը, որը ներկայանում է էկոլոգիապես չափազանց ճկուն և բարձր չորադիմացկունությամբ աչքի ընկնող ցածրաձ ծառերով ու թփերով: Առավել տարածված են նշենու (*Prunus dulcis*) տրազանտային տեսակներն ու Պալասի դժնիկը (*Rhamnus pallasii*), բազմապտուղ գիհի (*Juniperus polycarpus*), ուռատերև տանձենին (*Pyrus salicifolia*), բալենի ալեհեր (*Cerasus incana*), մահալեբյան բալենին (*Prunus mahaleb*), լերկատերև փոշնին (*Celtis glabrata*), Ֆենցլի նշենին (*Amygdalus fenzliana*): Խոտաբույսերից՝ դաշտավլուկը (*Poa bulbosavar, vivipara*), փետրախոտը (*Stipa szovitsiana*), վայրի գարին (*Hordeum Crinitum*), ցորնուկը (*Bromus danthonia*), սեզը (*Agropirum cristatum*), աբեդախոտը (*Stachys inflata*), Կոչիի ուրցը (*Thymus kotschyanus*), եղեսպակ վիշապազուխը (*Agropyron cristatum*), լերդախոտերը (*Teucrium polium, Teucrium canum*) արևելյան բավեղը (*Phlomis orientalis*):

Շրջանն ամբողջովին գուրկ է խոնավասեր լայնատերև անտառներից: Ոչ մեծ տարածքներ են զբաղեցնում գիհու նոսրանտառները, որտեղ, որպես ծառատեսակ, գերակշռում է գիհի բազմապտուղը (*Juniperus polycarpus*), բարձրությունների վրա տարածված է Խոշորառեչ կաղնին կամ Արևելյան կաղնին (*Q. macranthera*), թփերից հանդիպում են գիհի երկարատերևը և ցածրաձը (*Juniperus oblonga, Juniperus depressa*), թխկի վրացականը (*Acer ibericum*), փոշնի մերկը (*Celtis glabrata*), Ֆենցլի նշենին (*Amygdalus fenzliana*), Պալլասի դժնիկը (*Rhamnus pallasii*), ցախակեռաս վրացականը (*Lonicera iberica*), բոնչին (գերիմաստի) (*Viburnum lantana*) և այլն: Տարածված են նաև արհեստական ծագման սոճին (*Pinus*), տանձենու (*Pyrus*) և արոսենու (*Sorbus*) տեսակները,

նշենիները (*Amygdalus febrzliana*) և պիստակենիները (*Pistacia mutica*): Վայոց ձորի մարզում աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, խաղողի, սալորի, սերկևիլի, փշատի, ընկույզի բազմաթիվ տեսակներ, բազմաթիվ հատապտուղներ:

Տարածաշրջանում առկա են ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված 452 հազվագյուտ և անհետացող, 34 էնդեմիկ բուսատեսակներ:



Նկար 9.

Վայոց Ձորի անտառտնտեսության տարածքում հանդիպող հազվագյուտ բուսատեսակ Պախիֆրագմա Խոշորատերև (*Tomanthea daralaghezica*), Հիրիկ Ատրպատականյան (*Iris atropatana*), Ոգնաթուփ Մեխակի (*Acantholimon caryophyllaceum*) և (Նեկտարասկորդում *Nectaroscordum tripedale*) /նկար 9/:

Վայոց ձորի մարզում հանդիպում են 3 ինվազիվ (Երկնածառ բարձրավուն (*Ailanthus altissima*), Կոնիգա կանադական (*Conyza canadensis*), Տատակ ալեհեր (*Cirsium incanum*)) և 12 էքսպանսիվ բուսատեսակներ (Անթեմ տրիումֆետի (*Anthemis triumfettii*), Բալդրդան թավոտ (*Heracleum trachyloma*), Գինազոխ բժավոր (*Conium maculatum*) Դառը բիան (*Goebelia alopecuroides*) Լվաճաղիկ կուսատերև (*Tanacetum parthenium*) Խիժաճարճատուկ կնյունանման (*Chondrilla juncea*) Խոնդաս փոված (*Verbascum laxum*), Կանճրակ թուրքեստանյան (*Carthamus turkestanicus*) Հազարտերևուկ ասպիրակի (*Achillea filipendulina*), Հոտոտ արևելյան (*Clematis orientalis*), Տերեփուկ արևային (*Centaurea solstitialis*), Տերեփուկ վրացական (*Centaurea iberica*):

Մարզպետարանի մասնագետների և Ձեռնարկողի մասնակցությամբ Նախատեսվող գործունեության տարածքում իրականացվել է ուսումնասիրություն:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման տարածքում առկա են վայրի խնձորենի, շլորենի, տանձենի, տարածքում կան ալոճենու վարդագույն և նարնջագույն տեսակներ, մասրենու թփեր:

Կառուցվող տարածքում հաշվառվել է 18 մասրենու, 15 ալոճենու, 12 տանձենու և 18 շլորենու տարբեր հասակի և տեսակի թփեր և ծառատեսակներ:

Տարածքում շինարարական աշխատանքներ կատարելու դեպքում կվնասվեն թվով 63 տարբեր հասակի և տեսակի թփեր և ծառեր:

Կենդանական աշխարհ: Լանդշաֆտային պայմանների յուրօրինակությամբ պայմանավորված՝ Վայոց Ձորի կենդանական աշխարհը հարուստ է ու աշխարհագրորեն տարածված: Մարզի անտառային գոտում, հատկապես գիռուտներում կաթնասուններից հանդիպում են Բեզոարյան այծ (*Capra aegagrus*), Հայկական մուֆլոն (*Ovis orientalis gmelinii*), գորշ արջ (*Ursus arctos*), գայլ (*Canis lupus*), Սովորական շնագայլ (*Canis aureus*), Սովորական աղվես (*Vulpes vulpes*), քարակզաքիս (*Martes foina*), խայտաքիս (*Vormela peregusna*) անտառային կատու (*Felis silvestris*), եվրոպական նապաստակ (*Lepus europaeus*), սովորական ոզնի (*Erinaceus europaeus*), վայրի վարազ (*Sus scrofa*), Քարակզաքիս (*Martes foina*), Գորշուկ/փորսուղ (*Meles meles*) եղեգնակատու (*Felis chaus*) անտառային մկներ, ճագարամկներ, չղջիկներ, այդ թվում Մեհելիի պայտաքիթ չղջիկ (*Rhinolophus mehelyi* Matschie) և այլն:

Տարածված են նաև կիսաանապատային հատուկ օձերը (գյուրգա, իծ և այլն), մողեսներ և դողոջներ:

Շատ են միջատները (*Iphingouotus nebulasus*, *taptopternis gracilis* *Colliptamus siculus*), սողուններից՝ Հայաստանի համար էնդեմիկ հայկական իծը (*Viperu Raddei*), թռչուններից՝ կաքավը, ճնճուկը:

Կրծողներից տարածված են անտառային մկները, նապաստակները, փոքրասիական համտերները: Թռչուններից հանդիպում են սալամ-կաքավներ, տատրակներ, ագռավներ և կաչաղակներ: Ժայռոտ տեղերում տարածված են սողուններ (ժայռաբնակ մողես, լորտունների ընտանիքի՝ սահնօձեր): Բարձր լեռնային գոտին աղքատ է կենդանատեսակներից: Հանդիպում են գայլը, աղվեսը: Գերակշռում են կրծողները (ձյունաբնակ դաշտամուկը, անտառամկներ) և թռչունները (ուլարը, եղջերավոր արտույտը և ալպիական սերինոսը), գիշատիչ թռչուններից՝ ուրուրը, գիշանգղը, բազեն:

Թռչուններից առավել տարածված են սովորական լոր (*Coturnix coturnix*), Քարակաքավ (*Alectoris chukar*), Թխակապույտ աղավնի (*Columba livia*), Անտառային աղավնի (*Columba palumbus*), սև կեռնեխ (*Turdus merula*), սինակեռնեխ (*Turdus pilaris*, տատրակը, աքարը, կկուն, հոպուպը, ագռավը, կաչաղակը և այլն: Վայոց ձորի մարզում են գտնվում Հայաստանի 18 կարևորագույն թռչնաբանական տարածքներից (ԿԹՏ) երկուսը՝ Նորավանք և Ջերմուկ կարևորագույն

թռչնաբանական տարածքները, որտեղ հանդիպում են օձակեր արծիվը, քարարծիվը, ոսկյա արծիվը, գառնանգղը, գիշանգղը, բվեճը, միջերկրածովյան բազեն, ներկարարը, քարակաքավը, սպիտակ արագիլը, եվրոպական ճնճղաճուռակը, տափաստանային հողմավոր բազեն, մարգահավը, եվրոպական ճնճղաճուռակը և այլն:

Վայոց ձորի գետերում, ինչպես նաև Արփա գետում հանդիպում են կարմրախայտ (*Salmo trutta trutta*, *Salmo trutta fario*), հաշամ (*Aspius aspius*), մուրծա (*Barbus mursa*), Կուրի կողակ (*Capoeta capoeta*), մանրաթելուկ (*Acanthalburnus microlepis*), ասիական լայնականջ չղջիկ (*Barbastella leucomelas*) և Մեհելիի պայտաքիթ չղջիկ (*Rhinolophus mehelyi* Matschie):

Տարածքում հանդիպում է հազվագյուտ և անհետացող թիթեռների 6 տեսակ:

Նկար 10. Նինայի կապտաթիթեռ .



Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիներ են՝ Հայկական մուֆլոն (*Ovis orientalis gmelinii*) և Բեզոարյան այծ (*Capra aegagrus*), Կովկասյան կատվաօձ (*Telescopus Fullax*), Գորշ արջ (*Ursus arctos*), Սև անգղ (*Aegyptius monachus*), Կովկասյան ազնվացեղ եղջերու կամ մարալ (*Cervus elaphus maral*), օձակեր արծիվ (*Circaetus gallicus*) և այլն:

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են:

9.7. ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության նպատակն է ապահովել բնական էկոհամակարգերի, կենսաբանական բազմազանության և լանդշաֆտների, բնության

ժառանգության բնականոն զարգացումը, բացառելով կամ մեղմելով բնական գործընթացների խախտմանը նպաստող գործունեությունը:

Վայոց Ձորի մարզում առկա են 4 պետական արգելավայրեր՝ «Հերիերի նոսր անտառներ»՝ մնացուկային գիհու նոսրանտառների, «Ջերմուկի»՝ խոշորառեջ կաղնու լեռնային անտառների և հազվագյուտ կենդանիների, «Ջերմուկի ջրաբանական»՝ հանքային ջրերի տաք աղբյուրներ և «Եղեգնաձորի»՝ անտառային լանդշաֆտների և հազվագյուտ կենդանիների պահպանության նպատակով:

Տարածաշրջանում 2014թ. ԲՀՊՏ կենսաբազմազանության և լանդշաֆտի պահպանությանն ուղղված կայուն գործունեություն իրականացնելու նպատակով ստեղծվել է «Արփա» պահպանվող լանդշաֆտը:

9.8. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ Վայք համայնքի վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

ՎԱՅՔ քաղաք

1	2	3	4	5	6	7	8
1			ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքի մեջ	<	1
2			ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	16-20 դդ.	քաղաքի հս-աե մասում	S	գործող գերեզմանոցի հին հատվածն է (2)

3			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքի մասուն	հս	<	3
4			ԽԱՉՔԱՐ	1222 թ.	քաղաքի մասուն, Ջերմուկ պարհի կողմուն	աե Վայք-ձանա-ձախ	<	4
5			ԽԱՉՔԱՐ	1541 թ.	Վայք տանող ճանապարհի աջ կողմուն		<	6
6			ԽԱՉՔԱՐ	16 դ.	Վայքի ենթաշրջանի մուտքի մոտ, քաղաք մտնող ճանապարհի աջ կողմուն		<	7
7			ԽԱՉՔԱՐ ԱԼԱՄՀԱՏԻ	1251 թ.	Վայքի ենթաշրջանի մուտքի մոտ, քաղաք մտնող ճանապարհի աջ կողմուն		<	5
8			ԿԱՍՈՒՐԶ ՊԱՍԿԵՎԻՉԻ	17 դ.	քաղաքից 1 կմ ամ, Արփա գետի վրա		S	8

Սարավանուն կան հաշվառված 4 հուշարձան՝ XVII դարի ավերակ եկեղեցի, XIII դարի աղբյուր-հուշարձան, 4-5 կմ հարավ-արևմուտքում՝ XIV-XIX դարերի մատուռ և XI-XVII դարերի խաչքարեր:

Համաձայն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի մասնագետների կողմից կատարված ուսումնասիրությունների, նախկինում Զատիթափ, այժմ Վայք համայնքի Սարավան գյուղի վարչական սահմաններում «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային

կայան հիմնելու համար նախատեսված, ընդհանուրը՝ 6.20356 հա մակերեսով տարածքը պատմա-մշակութային միավորների վրա հնաարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ այստեղ պատմա-մշակութային միավորներ չեն փաստագրվել:

9. 9.ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Վայոց Ձորի մարզը հարուստ է բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 51 բնության հուշարձաններ, որից 26-ը՝ երկրաբանական, 5-ը՝ բնապատմական, 9-ը՝ ջրաերկրաբանական, 10-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Վայոց Ձորի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 6.

	Երկրաբանական հուշարձաններ	
1	«Բլրաբերդ» հրաբխային գմբեթ	Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր-Վայք ճանապարհի աջ կողմում
2	«Սատանայի աշտարակ» սյունաձև բազալտներ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում
3	«Բախտի կամար» բնական քարե թունել	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաք, Արփա գետի կիրճում

4	«Անանուն» որմնաքանդակներ	Վայոց ձորի մարզ, Երևան-Գորիս խճուղու ձախ կողմում, Ջերմուկ տանող ճանապարհից 44 մ դեպի Գորիս
5	«Վարդան Մամիկոնյան» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Կեչուտի ջրամբարից 2 կմ հվ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
6	«Ցիցքար» ժայռագագաթ	«Վայոց ձորի մարզ, Վայք քաղաքից 0.5 կմ հս-արմ
7	«Տորք Անգեղ» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղից 1.5 կմ հվ-արլ «Անապատե» վայրում
8	«Սֆինքս» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղ, Գրավ գետի կիրճում
9	«Սպիտակ քար» ժայռ մնացուկ	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 3 կմ հս-արմ, Աղավնաձոր-Ելփին ճանապարհի աջ կողմում
10	«Անանուն» տեկտոնական խախտում	Վայոց ձորի մարզ, Արենի գյուղի արլ մասում, Արփա գետի ձախ ափին
11	«Պահակային աշտարակ», Էրոզիոն ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում, Գնդեվազ գյուղի դիմաց
12	«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 1-1.5կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
13	«Անանուն» դայկաներ	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 4 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
14	«Անանուն» սյունաձև անջատմամբ բազալտներ	Վայոց ձորի մարզ, Գոմք գյուղի հս-արլ մասում, ձորակի աջ կողմում

15	«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի հվ եզրին
16	«Անանուն» խզվածքային կառուցվածք	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի արևմտյան ծայրամասում
17	«Անանուն» քարե քանդակներ	Վայոց ձորի մարզ, Խնձորուտ գյուղից 2.0 կմ հս, ԶառիթափԽնձորուտ ավտոճանապարհի երկու կողմում
18	«Վայոցսար» (Դալիկ) հրաբուխ	Վայոց ձորի մարզ, Կարմրաշեն գյուղից 3.0կմ հվ-արմ կողմում
19	«Անանուն» լավային ծալքեր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 5կմ հվ-արլ
20	«Անանուն» լավային հոսք	Վայոց ձորի մարզ, Շատին գյուղից 0.5 կմ արլ
21	«Անանուն» դայկայանման մարմին	Վայոց ձորի մարզ, Վերնաշեն գյուղից հս
22	«Գետիկվանքի» բրածո ֆլորա	Վայոց ձորի մարզ, Գետիկվանք գյուղից 3 կմ հս-արլ, 2240 մ բարձրության վրա:
23	«Ազատեկի» բրածո ֆլորա	Վայոց ձորի մարզ, Ազատեկ գյուղի մոտ
	Բնապատմական հուշարձաններ	
1	«Սմբատասար» բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Արտաբույնք գյուղից 0.75 կմ արլ
2	Պոռշաբերդի բնապատկերներ	Վայոց ձորի մարզ, Գլաձոր գյուղից 6 կմ հս
3	«Բերդի գլուխ» ամրոցի հրվանդան	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղի հս-արմ եզրին

4	Վարդանես լճի համալիր	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղից 3.5-4 կմ հս-արլ, նախկին Վարդանես գյուղի ավերակների մոտ 1748 մ բարձրության վրա
5	Մարտիրոս գյուղի բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 2.0 կմ-արլ, Նգար լեռան արմ լանջին
6.	«Սուրբ Գևորգ» աղբյուրների խումբ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գյուղի հվ մասում, Հերիեր գետի աջ ափին
	Զբաերկրաբանական հուշարձաններ	
1	«Ջերմուկի» աղբյուրներ	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ առողջարանի տարածքում, ծ.մ 2140 մ բարձրության վրա
2	«Յոթաղբյուր»աղբյուր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 10 կմ հս-արլ դեպի Ալ լիճ տանող ճանապարհին, Ջերմուկի հրաբխային պլատոյի վրա, ծ.մ-ից 2610 մ բարձրության վրա
3	«Գրավի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 5 կմ հվ, Գրավ գետի հովտում, ծ.մ-ից 1630 մ բարձրության վրա
4	«Պարույր Սևակ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գետի վերին հոսանքում, ծ.մից 1985 մ բարձրության վրա
5	«Արտաղբյուր» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գյուղից 2.7 կմ հս-արլ, Եղեգիս գետի աջ ափին, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
6	«Զրովանք» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Արփի գյուղից 3 կմ հվ-արլ, Արփա գետի ձախ վտակ Զրովանք գետակի ակունքում, ծ.մ-ից 1345 մ բարձրության վրա
7	«Առնետի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Խաչիկ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1780 մ բարձրության վրա

8	«Բազմազբյուր» աղբյուրներ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գյուղի մոտ, ծ.մ-ից 1508 մ բարձրության վրա
9	«Մոզ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Մալիշկա գյուղից 2.5 կմ արլ, Արփա գետի կիրճի աջ ափին, ծ.մ-ից 1170 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
1	«Չոբան լիճ»	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից մոտ 15 կմ հս, Արփա գետի աջ վտակի վերին հոսանքում
2	«Բարձրունի» լիճ	Վայոց ձորի մարզ, Բարձրանի գյուղից 3 կմ արլ, 2760 մ բարձրության վրա
3	«Հայելի լիճ»	Վայոց ձորի մարզ, Արտավան գյուղից 2 կմ արլ, 2100 մ բարձրության վրա
4	«Անանուն» լիճ	Վայոց ձորի մարզ, Կապույտ գյուղից 3 կմ հվ-արլ, 2150 մ բարձրության վրա
5	«Սրբալիճ» լիճ	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 0,5 կմ արլ, 1937 մ բարձրության վրա
6	«Մարտիրոս» լիճ (Վերին լիճ)	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 1,5 կմ արլ, 2145 մ բարձրության վրա
7	«Ջերմուկ» («Ցուլք»)	Վայոց ձորի մարզ, Արփա գետի աջակողմյան Ջերմուկ վտակի վրա
8	«Քարավազ» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Հեր-Հեր գետի աջակողմյան վտակի վրա, Կարմրաշեն գյուղից 2 կմ արլ
9	«Հեր-Հեր» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Հեր-Հեր գետի վրա, համանուն գյուղից 2.5 կմ հս
10	«Գետիկավանք» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գետի աջակողմյան վտակի վրա, Վարդանաձոր գյուղից 0.5 կմ արմ

	Կենսաբանական հուշարձաններ	
1	Կորնգան եղջյուրավոր	Վայոց ձորի մարզ, Վարդենյաց լեռնանցք, Աղնջաձոր գյուղից 3 կմ հս-արմ

Պատմության և մշակութային, բնության հուշարձանները նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են:

9. 10. ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

Վայք համայնք.

Մարզն ունի գյուղատնտեսական ուղղվածություն, հայտնի էիր գիննիններով և խաղողի Արենի տեսակով, մեծ զբոսաշրջային ներուժով՝ պայմանավորված պատմամշակութային կոթողներով: Այստեղ հայտնաբերվել է աշխարհի ամենահին կոշիկը: Մարզի քաղաքներն ունեն գյուղմթերքի արտադրության և վերամշակման ուղղվածություն՝ պանրի, կաթի: զարգացած է գինեգործությունը: Մարզում է գտնվում Ջերմուկ առողջարանային կենտրոնը; Մարզի տարածքը հարուստ է հանքային ջրերի, ապակու հումքի, ներկերի, ոսկու, կապարի, բազալտի, գրանիտի, մարմարի պաշարներով; Մարզում առկա է էլեկտրաէներգիայի բաշխման զարգացած ցանց, գործում են 31 ՓՀԷԿ-եր: Մարզն ունի աշխատանքի, սոցիալական ապահովվածության խնդիրներ:

Վայք խոշորացված համայնքը վերակազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ- 328-Ն) 2021 թվականի սեպտեմբերի 24-ին կատարված փոփոխության արդյունքում՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք (Ազատեկ, Արին, Ջեղեա, Հորադիս, Վայք բնակավայրերով) և Ջառիթափ(Բարձրունի, Գոմք, Ջառիթափ, Խնձորուտ, Մարտիրոս, Նոր Ազնաբերդ, Մարավան, Սերս բնակավայրերով) համայնքների միավորումով:

Վայքը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում: Այն մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից գտնվում է 20կմ, իսկ Երևան քաղաքից 140կմ հեռավորության վրա և հանդիսանում է Երևան-Գորիս-Արցախ ճանապարհի հանգույց: Քաղաքի ներկա տարածքը տեղադրված է Արփա գետի միջին հոսանքում, գետի ողողահունի համեմատաբար լայնացած մասում: Տարածքը հյուսիսից, հյուսիս-արևմուտքից շրջապատված է Եղեգիսի, իսկ հարավից Վայոց ձորի լեռնաշղթաների ճյուղավորությունների խիստ կտրտված և թեք

լանջերով, միայն հյուսիս-արևմտյան մասում Եղեգիսի լեռնաշղթայի հարավային ճյուղավորությունների վրա հանդիպում են համեմատաբար հարթեցված հեղեղատարով քիչ կտրտված տեղամասեր: Բացարձակ բարձրությունները տատանվում են 1200-1300 մետր: Տարածքի կլիման չոր ցամաքային է, չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով: Ձմեռը չափավոր ցուրտ է, ոչ երկարատև: Գարունը տաք է, համեմատաբար երկարատև: Ամառը երկարատև է, շոգ, չոր, գերակշռում են հաստատուն պարզ եղանակները: Աշունը երկարատև է, գերակշռում են տաք, քիչ ամպամած

օրերը:

Բնակավայրի գազաֆիկացված է:
Վայք քաղաքի և նրա գյուղատնտեսական հողերի ոռոգման համար հիմնականում օգտագործվում է Արփա գետի ջուրը:

Վայքի մարզամշակութային օբյեկտներն են՝ 600 և 200 տեղանոց դահլիճներով մշակույթի պալատը, գեղարվեստի և երաժշտական դպրոցները, գրադարանը՝ 180 հազ. կտոր գրքով, 2000 տեղով մարզադաշտը: Քաղաքում գործում են հյուրանոցներ, սրճարաններ, ռեստորան, հասարակական սննդի և կենցաղ սպասարկման օբյեկտներ: Ունի մեկ ավագ դպրոց, մեկ հիմնական դպրոց, մեկ վարժարան, դեղատուն, 2 մանկապարտեզ, կապի հանգույց:

Սարավան գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, Դարբ գետի ափին, հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձորից 35 կմ է, Վայք քաղաքից՝ 18 կմ: Գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: Սահմանակից է Վայոց ձորի մարզի Արտավան, Գնդեվազ և Սյունիքի մարզի Գորայք գյուղերին: Սարավանը վերաբնակեցվել է 1988թ-ին: Նախկինում՝ 781թ-ին Սարավան գյուղի տարածքում է գտնվել Թերփ բնակավայրը: Գյուղի տարածքում կան հին խաչքարեր և գերեզմանաքարեր: 1988թ-ից գյուղը բնակեցվել է երիտասարդ ընտանիքներով: Այն կազմված է երեք բնակավայրերից՝ Սարավան, Սարալանջ և Ուղեձոր: Սարավանը լեռնային գյուղ է, շրջափակված է գեղեցիկ անտառներով: Բնակավայրի տարածքով է անցնում Երևան-Մեղրի միջպետական մայրուղին, որի աջ և ձախ կողմերում են գտնվում Սարավան և Սարալանջ գյուղերը:

9. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՑ ՅՐԱԺԱՐՄԱՆ (ՉՐՈՅԱԿԱՆ) ՏԱՐԲԵՐԱԿԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ՝ ԸՆՏՐԿԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԴԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ:

ՇՄԱԳ-ի շրջանականերում դիտարկվել է նախատեսվող գործունեության գրոյական, այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը:

Չրոյական տարբերակ նշանակում է նախատեսվող գործունեության չիրականացում, որը կհանգեցնի առաջին 20 տարվա ընթացքում այլ աղբյուրներից մոտ 192,000 ՄՎտ.Ժ էլեկտրաէներգիայի չարտադրելուն: Նշված քանակի էլեկտրաէներգիայի պահանջարկը հնարավոր կլինի ապահովել շրջակա միջավայրի վրա առավել ազդեցություն ունեցող էներգիա արտադրող այլ

գործունեությունների շնորհիվ՝ ջերմաէլեկտրակայան, հիդրոէլեկտրակայան և այլն, ինչն իր հերթին կհանգեցնի շրջակա միջավայրի վրա էական ազդեցությունների աճին:

Արևային էլեկտրակայանի միջոցով էլեկտրաէներգիայի ստացումը նպաստելու է օդում ածխաջրածինների կրճատմանը, որոնք արտանետվում են էներգիայի ստացման այլ աղբյուրներից: Ածխաջրածինները նպաստում են կլիմայի փոփոխությանը՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով:

Արևային էլեկտրակայանների ներդրումը էներգետիկ համակարգում համարվում է ամենահեռանկարային այլընտրանքային ճյուղը: Համաձայն միջազգային էներգետիկ գործակալության տեսության 40 տարի հետո արևային էներգետիկան կարտադրի ամբողջ համաշխարհային էներգետիկ պահանջարկի շուրջ 20-25%-ը, ինչն իր հերթին կնպաստի տարեկան 6 միլիարդ տոննա ածխաջրածնային գազերի կրճատման:

Տարածքի այլընտրանք: Տարածքն ընտրված է ելնելով արևային էներգետիկայի զարգացման համար նպաստավոր պայմաններից: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում արևային էներգետիկայի զարգացման համար: Տարածքը գերարածեցված է, գտնվում մարդու ակտիվ գործունեության գոտում: Հողի նպատակային նշանակությունը՝ էներգետիկ ենթակառուցվածքների է:

Ընտրված տարբերակի հիմնավորումը: Նորագույն տեխնոլոգիաների սրընթաց աճի հետ զուգահեռ կարևոր է շրջակա միջավայրի պահպանման գիտակցումը, և այնպիսի առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը, որոնք անվտանգ են շրջակա միջավայրի համար: Արևակայանի կառուցման դեպքում.

- ՀՀ-ում հանրության համար այլընտրանքային էներգիան դառնալու է հասանելի,
- կապահովի բնակչության էներգասպառման հեռանկարային պահանջարկը,
- կհանգեցնի բնակչության կոմունալ բեռի թեթևացմանը, ֆինանսական միջոցների խնայմանը և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Վերականգնվող էներգետիկ համակարգերը, որոնց թվին են պատկանում արևային էլեկտրակայանները, գործնականում արդեն լայն կիրառում ունեն աշխարհում:

Աշխարհը հիմնված է էներգետիկ պաշարների օգտագործման վրա, որոնք հետզհետե սպառվում են և չեն վերականգնվում: Էներգիայի ստացման այլ մեթոդները վնասում են բնությանը և մարդկանց առողջությանը, միաժամանակ սպառնում երկրի բնական պաշարների նավազեցմանն ու անհետացմանը: Ներկայումս էլեկտրաէներգիայի 70%-ն աշխարհում արտադրվում է հանածո վառելիքների հիման վրա (նավթ, ածուխ, բնական գազ): Ջերմային էներգիայի արտադրությունում հանածո վառելիքների մասնաբաժինը 90% է:

Համաձայն էներգետիկայի հայկական գործակալության կայք էջի՝ Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ (1մ² հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կվտժ/մ², իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կվտժ/մ² ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով): Այն հնարավորություն է տալիս

Հայաստանի հանրապետությանը զարգացնել իր տնտեսությունը, նվազեցնելով կախվածությունը ներմուծվող վառելիքից:

Այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը թույլ է տալիս զգալիորեն նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև կրճատում է էներգիայի ստացման ծախսերը: Էներգախնայողությունն էապես կարող է նպաստել և՛ շրջակա միջավայրի, և ամբողջ մոլորակի բնապահպանական խնդիրների լուծմանը: Ներկայիս տեխնոլոգիաները, որոշակի ներդրում կատարելուց հետո, թույլ են տալիս նույնիսկ տնային տնտեսություններում ունենալ սեփական, բնական էներգիայի ստացման աղբյուրներ: Էներգիայի և ռեսուրսների անխնա սպառման հետևանքները գալիք սերունդների համար կարող են ունենալ լուրջ բացասական ազդեցություն, ուստի այլընտրանքային, վերականգնվող այդ թվում արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար:

Գործունեության առաջին **20** տարվա ընթացքում այլ **192,000** ՄՎտ.ժ, ինչը կլրացնի հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկը, օգուտների և վնասների համեմատական վերլուծությունից ակնհայտ է, որ արևային էլեկտրակայանների օգուտները շատ ավելին են, քան պատճառվող վնասները:

Ընտրված տարածքը ևս բավականին նպաստավոր է արևային էներգետիկայի զարգացման համար, շրջակա միջավայրի վրա հնարավոր ցածր և աննշան ազդեցություններով:

10. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ, (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ՓԱԿՄԱՆ և ՀԵՏՓԱԿՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ) ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան 8-րդ փողոց, 2/1 հողամաս հասցեում՝ 6.20356 հա տարածքի վրա:

10.1 ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ:

Արևային կայան: Նախատեսվում է կառուցել 5,000 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայան, որի զբաղեցրած մակերեսը 6.20356 հա է, վահանակների զբաղեցրած մակերեսը 5,6հա:

Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 8788 հաս բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 605Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 20 հատ 250կՎտ էլքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Ընտրվել են JAM66D45-605/LB ֆիրմային արտադրության 22.4% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 605Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2333x1134x30մմ: Փոխակերպիչները Ginlong (Solis) արտադրության, մոդելը Solis-250K-EHV-5G 250կՎտ էլքային հզորության, ցանցային տեսակի, 14 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով:

250կՎտ հզորությամբ փոխակերպիչները ունեն 28-ական հաստատուն հոսանքի մուտք, որոնց միացվում են 26 հատ հաջորդաբար միացված ֆոտովոլտային պանելներով: Ֆոտովոլտային պանելների շղթաները միմյանց միացվում են պանելների մուտքին 4մմ² (EU)/12AWG(US), L=1200մմ և PV1-F1x4մմ² մալուխներով: Արևային էլեկտրակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել ցինկով գավանապատված մետաղական կոնստրուկցիաներով, և բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 24° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է, (ՀՀ ՇՆ II-7.01-2011):

Արևային կայանի տարածքում կառուցվելու է 6/0.8 6300կՎա հզորության ենթակայան: Արևային կայանը միացվում է «Որոտան 2» 110/6ԿՎ ենթակայանին 1,4կմ երկարության 6ԿՎ օդային գծով:

Մոդուլների և փոխակերպիչների համար նախատեսված են MC4 տիպի կոնեկտորներ: Շղթաների զուգահեռ միացումներն ապահովված է փոխակերպիչներում, յուրաքանչյուր 17 և 18 շղթայի համար նախատեսված է առանձին փոխակերպիչ:

Ընտրվել են JAM72D40-590/LB ֆիրմային արտադրության 22.4% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 605Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2333x1134x30մմ: Փոխակերպիչները Ginlong արտադրության, մոդելը Solis-250K-EHV-5G 250կՎտ էլքային հզորության, ցանցային տեսակի, 14 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով, Փոխակերպիչի հաստատուն հոսանքի " + " և " - " շղթաների մուտքերը պաշտպանված են 15Ա ապահովիչներով: Փոխակերպիչը ունի համացանցին միանալու և տվյալները փոխանցելու հնարավորություն, նրանում ներկառուցված են DC և AC իմպուլսային գերլարրումների պաշտպանիչ սարքեր (SPD)

Տրանսֆորմատորային ենթակայան: Նախատեսվում է 6/0.8/0,8կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում: Արևային ֆոտովոլտային կայանը 6կվ ցանցին միանում է 6300ԿՎԱ 6/0.8կվ

տրանսֆորմատորի միջոցով, օգտագործվում է նաև 25կՎԱ 6/0.4կվ տրանսֆորմատոր՝ սեփական կարիքների համար: Ենթակայանի զբաղեցրած տարածքը 108մ2:

Կառուցվելու է 1 հատ 4մ3 տարողության յուղընդունիչներ (հոր)՝ տրանսֆորմատորի տակ, յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է մետաղական բաք՝ բետոնային ծածկով,

Օդային գիծ - Ենթակայանը միանում է «Որոտան-2» 110/6 ԿՎ ենթակայանի 6կՎ ԲՄ-ին 1,4 կմ երկարության 6կվ լարման էլեկտրահաղորդման գծով: Նախագծվող 6կՎ ՕԳ-ն սկիզբ են առնում №1 և №2 հենարաններից և մոնտաժվում են №3...№27 հենարաններ: ԷԷՀՎ տեխնիկական կանոնակարգի համաձայն ՕԳ հաղորդալարերի նվազագույն հեռավորությունը հողի մակերևույթից պետք է լինի ոչ պակաս 6մ, որն ապահովված է նախագծում: Տարածքում գոյություն ունեցող 6կՎ փայտե №1'...№8' հենարանները ապամոնտաժվում են, փոխարենը տեղադրվում են երկաթբետոնե №1'...№9'' հենարաններ՝ թվով 9 հենարան:

Հողանցում և շանթապաշտպանություն. Փոտովոլտային կայանի հողանցումն իրականացվելու է համաձայն СНиП 3.05.06-96: Հողի մակերևույթին 0.6մ խորության վրա հավաքվում է հողանցման սարքվածքը (կոնտուրը), որը բաղկացած է . հողանցման հորիզոնական հաղորդիչից (40x4 շերտապողպատ), . հողանցման հաղորդաձող (50x50x5, L=1.5մ անկյունակ), հողանցման հաղորդալարերից: Հողանցման սարքվածքը իրականացվել է տեսական հաշվարկի հիման վրա: Լաբորատոր չափումներից հետո, եթե այն մեծ է նորմավորված դիմադրությունից անհրաժեշտ է ավելացնել լրացուցիչ էլեկտրոդներ: Պաշտպանական հողանցումը իրականացվում է հողանցման հաղորդալարերով: Այդ նպատակով ֆոտովոլտային պանելների այլումինե իրանը հողանցման հաղորդալարով միացվում է հողանցման համակարգին: Բոլոր մետաղական ոչ հոսանքատար սարքավորումները պետք է հողանցվեն: Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն՝ ПУЭ(Правила устройства электроустановка - издание 2010г.) . СНиП 3.05.06-85 (Монтаж электрических устройства) . СН 102-76*(Инструкция по устройству сети заземления в электроустановках): Տարածքը պետք է ապահովել սպասարկման համար անհրաժեշտ արահետներով, ջրամատակարարման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգերով: Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ:

Հողանցման համակարգի համար նախատեսվում է իրականացնել հողանցման օջախներ նախագծում նշված տեղերում, հողանցման համակարգի դիմադրությունը պետք է լինի 40հմ: Լաբորատոր չափումներից հետո, եթե պաշտպանական հողանցման դիմադրությունը մեծ է նորմավորված արժեքից, անհրաժեշտ է խփել լրացուցիչ էլեկտրոդներ: Էլեկտրոդների միջանկյալ հեռավորությունը կազմում է 20մ : Հողանցման դիմադրության փոքրացման համար կարելի է հողը հարստացնել անտրացիտի փոշիով կամ պղնձարջասպի աղով՝ յուրաքանչյուր էլեկտրոդին 1կգ չափով: Ըստ ПУЭ-ի պահանջների՝ էլեկտրասարքավորումների և էլեկտրական վահանների բոլոր

մետաղական, ոչ հոսանքատար, մասերը, որոնք նորմալ վիճակում լարման տակ չեն գտնվում, բայց մեկուսիչի վնասման դեպքում կարող են հայտնվել լարման տակ, ենթակա են հողանցման:

Արտաքին լուսավորություն և տեսահսկում: Լուսավորության հաշվարկը իրականացվել է Dialux համակարգչային ծրագրով՝ 3D մոդելավորմամբ, համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 նորմերի: Հաշվարկի միջոցով ընտրվել է լուսավորության հենարանների բարձրությունը, միջհենարանային հեռավորությունը, լուսարձակների հզորությունը և թեքման անկյունը: Dialux ծրագրով հաշվարկում օգտագործվել է 100լմ/վտ արդյունավետությամբ լուսարձակ: Լուսավորության ցանցը կառուցվում է 4մ բարձրության մետաղական բարձակներով հենարաններով (բարձրությունը սահմանափակված է հաշվի առնելով ստվերների առկայությունը ֆոտովոլտային վահանակների վրա): Լուսավորությունը կառավարվում է լուսավորության ղեկավարման արկղից (ԼՂԱ): ԼՂԱ-ն տեղադրվում է Տ/ե-ում՝ պատին: ԼՂԱ-ն ունի ավտոմատ և ձեռքի կառավարման ռեժիմներ: Ավտոմատ կառավարումը իրականացվում է ըստ բնական լուսավորվածության աստիճանի:

Տեսահսկման համակարգը ապահովում է պահպանվող տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում և արտացոլում պահակատան էկրանին: Տարածքի տեսահսկման համակարգը բաղկացած է հասցեավոր տեսախցիկներից, ինֆորմացիոն ստորգետնյա մալուխներից, ցանցային կոմուտատորներից: Ինֆորմացիոն և տեսահսկման բոլոր մալուխները անցկացվում են խողովակներով: Տեղադրվելու են տեսախցիկները լուսավորության հենասյունների վրա:

Մալուխագիծ- Մալուխները դուրս գալով «Որոտան 2» ենթակայանի 6կՎ ԲՄ-ից մոնտաժվում են գրունտային տարածքով մինչև N1 և N2 հենարաններ, որոնցից անցում են կատարում AC70/11 օդային գծի, այնուհետև №26 և №27 հենարաններից AC70/11 օդային գծերը դարձյալ անցում են մալուխային գծերի, հետո մոնտաժվում են գրունտային տարածքով մինչև պատվիրատուի կողմից նոր տեղադրվող ենթակայան: Մալուխները խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավազե անկողին, այնուհետև տեղադրվում են մալուխները և ծածկվում 150մմ ավազե շերտով, որից հետո խրամուղին լցվում է ավազակոպչային խառնուրդով, այնքան որ հնարավոր լինի մալուխից 250մմ բարձրության վրա տեղադրել ազդանշանային ժապավեն, ապա խրամուղին լցվում է ավազակոպչիձով: Մալուխները խրամուղում տեղադրվում են գետնից 0.7մ խորության վրա: Մալուխները տեղադրվում են օձաձև, ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար: Մալուխների հատույթներն ընտրվել են ըստ թույլատրելի երկարատև հոսանքի (ԷՄՆԸՊ ՏԿ III գլուխ, կետ 8 աղ. 7), ստուգվել ըստ լարման անկման և լարման շեղման (համաձայն ՇՍ 256.1325800.2016 պահանջների 0.4կՎ ցանցերում լարման անկումը չպետք է գերազանցի 7.5%-ը, իսկ լարման շեղում՝ ±5% նորմալ ռեժիմում): Մալուխները կարճ միացման և գերբեռնվածության հոսանքներից պաշտպանվում են մուտքային եռաֆազ 250 Ա ավտոմատ անջատիչներով: Բաց տարածքում տեղակայվող ավտոմատ անջատիչները IP 65 տիպի են, իսկ փակ տարածքում՝ IP 31 տիպի:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ պահպանվում են ԷԷ ՀՏԿ-ի IV գլխի 19 կետում նշված մինիմալ թույլատրելի հեռավորությունները:

Մալուխագծի երկարությունը 131մ է, որից խրամուղում 95մ, 16մ ՏԵ-ում կանալով, 16մ հենարանի երկայնքով, 4մ կոնստրուկցիայով;

Պահեստային շինություն. Տարածքում նախատեսվում է պահեստային շինություն՝ 10 x 8 մ² չափերի սենդվիչ պանելներով փակ տարածք, խոտանված մասերի վնասված վահանակների հավաքման համար:

Պահակակետ. Սույն նախագծով նախատեսվում է իրականացնել մեկ հարկանի պահակակետ ՀՀ Մարզ Վայոց ձոր, համայնք Վայք գյուղ Մարավան 8-րդ փողոց 2/1 հողամասում: Շինությունը հատակագծում ունի ուղղանկյուն տեսք՝ 6.58 x 4.9 մ արտաքին չափերով, հարկի մաքուր բարձրությունը 2.8 մ է հաշված հատակից: Արտաքին պատերը կրող են, իրականացված երկշերտ կանոնավոր շարվածքի տուֆ քարից: Պատերում տեղադրված են միաձույլ ե/բ միջուկներ և եզրափակված է միաձույլ ե/բ գոտիով: Հիմքերը ժապավենային են, միաձույլ ե/բ-ից: Որպես հիմնատակ ընդունված են 2.0 կգ/սմ: Օգտագործվելու է նաև որպես օպերատորական սենյակ, որտեղ մոնիթորինգի նպատակով տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար:

Արտակարգ իրավիճակներ և տեսահսկման համակարգ. տարածքում նախատեսվում են տեղադրել հրդեհաշիջման վահանակներ և կրակմարիչներ: Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ:

Տեսահսկման համակարգը ապահովում է պահպանվող տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում և արտացոլում պահակատան էկրանին: Տարածքի տեսահսկման համակարգը բաղկացած է հասցեավոր տեսախցիկներից, ինֆորմացիոն ստորգետնյա մալուխներից, ցանցային կոմուտատորներից:

Ցանկապատում. Տարածքն ամբողջությամբ ժամանակավոր ցանկապատման փոխարեն առաջարկվում է ի սկզբանե կառուցել ԱՖԷԿ-ի հողատարածքի հիմնական ցանկապատը ըստ նախագծի, բաց թողնելով միայն հողատարածքի դարպասը: Բաց թողնված հատվածում անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր առանձնացնող ցանկապատ, այնուհետև տեղադրել ցանցավոր դարպաս: Կայանի տարածքը ցանկապատվելու է 2մ բարձրությամբ մետաղացանցով:

Ներքին ճանապարհ- տարածքում առկա է գրունտային ճանապարհ, որը նախատեսվում է վերակառուցել՝ ավազակոպիճով:

Գործունեության տարածքում բացակայում են շենք-շինություններն, ուստի քանդման աշխատանքներ չեն նախատեսվում: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ: Տարածքում գոյություն ունեցող Օդային գիծը և փայտե հենարանները ապամոնտաժում և տեղափոխում են ՀԷՑ-ի համաձայնությամբ / տես նախագիծը/ Պահպանելով անվտանգության գոտիները և ՀՀՇՆ նորմերը:

Շինհրապարակ. գործունեության իրականացման համար կազմակերպվելու է շինհրապարակ, ընդհանուր՝ 620356 մ2 մակերեսով:

Շինարարության փուլում նախատեսվում է հետևյալ շինարարական աշխատանքները.

շինարարական հրապարակի կազմակերպում,

- հողային աշխատանքներ,
- շինտեխնիկայի կայանման վայր,
- ծածկեր, կոնստրուկցիաներ,
- հարդարման, բարեկարգման աշխատանքների իրականացում և այլն:


Շինարարական հրապարակում լինելու են.

- աշխատակազմի գրասենյակ- 1 հատ
- հանդերձարան -1 հատ
- նյութերի պահեստավորման, հողի պահման տարածք
- բիոզուգարան - 2 հատ
- պահակատուն-1 հատ
- աղբի տարա- 2 հատ
- լուսարձակներ
- հակահրդեհային վահանակ, հիդրատներ
- մեքենաների անիվների լվացման հարթակ՝ 1 հատ 8,0x3,5 մ չափերի:

Շինհրապարակի մուտք և ելքը լինելու է մեկ տեղից: Շինհրապարակներն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս:

Շինհրապարակներում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածք:

Շինհրապարակների կազմակերպման հատակագիծ



Շինարարության ժամանակ նախատեսվում է ժամանակավոր պահեստ, ինչպես նաև աշխատակազմի սենյակ, հանդերձարանը, աղբի հավաքման երկու կետ, գուգարան՝ 2 հատ, մուտքի-ելքի մոտ տեղադրվելու է ավտոլվացման կետ:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների լվացման հարթակ՝ 8,0x3,5 մ չափերի: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 3տ տարողության պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով՝ ծալքաթիթեղով: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները, տեղադրվելու են վտանգն ազդարարող համապատասխան նշաններ, տեղեկատվական պաստառ՝ Կառուցապատողի վերաբերյալ:

Լուսավորություն և էլեկտրամատակարարում. շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Շինարարության համար անհրաժեշտ էլեկտրամատակարարումն ապահովելու համար տեղադրվելու է դիզելային գեներատոր:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.

Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Օգտագործվելու են, տարբեր մակնիշի մոտ յոթ տեխնիկա:

Հողային ռեսուրսներ. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ: Արևակայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա մալուխազծի անցկացման նպատակով խրամուղիների փորման և այլնի հողային աշխատանքներ:

Հանվող բուսահողի քանակ՝ 15.41մ3, գրունտի քանակը 496մ3, որից արևակայանի կետային հիմքերը՝ 330մ3, ենթակայանի 40մ3, հենասյուների 25մ3, խրամուղիների և այլնը՝ 101մ3: Հետլիցքի քանակը 415մ3, մնացորդային գրունտի քանակը՝ 81մ3 հեռացվելու է համայնքապետարանի կողմից համաձայնեցված վայր, -իրականացվելու է բնահողի տեղում տոփանում իսկ մեծ քարերը տեղափոխվելու է համաձայն АПЗ- մեջ նշված վայրի համաձայնության՝ 7 կմ հեռավորության վրա:

Ջրային ռեսուրսներ. Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի վերաբերյալ պայմանագիրը կնքվելու է համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձի հետ Կապալառուի կողմից՝ շինարարության փուլում: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:

Կեղտաջրերի հեռացում. Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ շարժական 1,0*1,5 չափերի 2 հատ բիոզուգարանից՝ լվացարանով:

Թափոններ. Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինարարական աղբի տեսքով՝ նյութերի մնացորդներ (ավազ, մանրախիճ, պլաստմասե իրեր և այլն), աղտոտված լաթեր, պարկեր, կենցաղային աղբ, մետաղական մնացորդներ(մետաղյա լարերի մնացորդներ, տարաներ և այլն):

Սոցիալական. Շինարարական աշխատանքներին ներգրավելու են առավելագույնը 35 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են համայնքի բնակիչներ, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Բարեկարգում. Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

10.3 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ.

Արևակայանի և ենթակայանի տեղակայման, մալուխագծի անցկացման աշխատանքները տևելու է մինչև մեկ տարի:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

- 1.Պլանավորում և կազմակերպում:
2. Նախնական ինժեներական աշխատանքներ:
- 3.Հողային աշխատանքներ :
- 4.Հիմքերի տեղակայում, մոնտաժում :
- 6.Ֆոտովոլտային վահանակների տեղադրում և այլն:

հի	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԱՅՆԵՐՈՎ																				
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
1	Նախաշինարարական, քանդակ և ապամոնտաժման աշխատանքներ	■																				
2	Նախնական ինժեներական աշխատանքներ	■																				
3	Չողային աշխատանքներ		■																			
4	ԱՖԷ-ի 6/0, 8/0, 8/4 լարման ենթակայանի շինարարություն			■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
5	Կողմ կրեստորվածիների հիմքերի, հենասյունների տեղակայում, շինաղբի տեղափոխում		■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
6	Գետնաբերան կրեստորվածիների ձգում, տարածքի ցանկապատում							■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
7	Մայրիկների անցվածքում			■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
8	Չողանցման ցանցի մոնտաժ					■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
9	Արտաքին լուսավորության համակարգ և օդերևութաբանական կայան							■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
10	Արևային վահանների տեղադրում									■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
11	Բարեկարգում, կուտակված շինաղբի տեղափոխում												■	■	■	■	■	■	■	■	■	■
12	Ավազակրափնային մանսպարիի կառուցում																					
13	Ենթակայանի և դեկադարման շենքի ներքին հարդարում																					
14	Ինվերտորների տեղադրում և էլեկտրական միացում																					
15	Տրանսֆորմատորների էլեկտրական միացում																					
16	ՃԿՎ մարտիային գծի մոնտաժում																					
17	Տեսահսկման համակարգի մոնտաժում																					
18	Օդերևութաբանական կայանի միացում																					
19	Դեկադարման սենյակի կահավորում և համակարգի տեղադրում																					
20	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																					

10.4. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ

Ջուր: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կնքվելու է Կապալառու կազմակերպության կողմից համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո՝ շինարարական աշխատանքների սկզբում:

Շինարարությունը տևելու է մինչև մեկ տարի օր, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 35 աշխատակից:

Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է տարածքի հրդեհամարման, անիվների լվացման, տարածքի ջրման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ձ.}} = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ3օր/մարդ

$n1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 30 մարդ

$N1$ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ3օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 208օր:

$$W_{\text{ի.տ.}} = (5 \times 0.016 + 30 \times 0.025) \times 208 = 172,64 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,83 \text{ մ}^3/\text{օր:}$$

Անիվների լվացման համար Շինարարության փուլում նախատեսվում է, մեքենաների անիվների լվացումը նախատեսվում է 2-3 հատ, օրը 1 անգամ հաճախականությամբ տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 1 = 0,8 \text{լ/վրկ}$$

Պարբերաբար նախատեսվող ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝
 $U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ՝}$

$S1$ – ջրվող տարածքի մակերեսը 1000 մ2, (շինհրապարակ, ճանապարհներ)

$K1$ – 1 մ2 օրական ջրցանի նորմը, 0.0015 մ3,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 150 (առավելագույնը 150օր)

$$U1 = 1000 \times 0.0015 \times 150 = 225 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1,5 \text{ մ}^3/\text{օր:}$$

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Օգտագործվող նյութեր

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

մալուխ, մետաղ՝ ալյումին, պողպատ, մետաղական կոնստրուկցիաներ, մեկուսիչ նյութեր, բետոն, խիճ, փայտանյութ:

Հաղորդալարերը լինելու են պողպատ-ալյումին :

Հենասյուների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերի և վառելիքի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շահագործման փուլում բնառետուրսների օգտագործում չի նախատեսվում, գործելու է միայն էլեկտրամատակարարման համակարգը: Արևակայանն ապահովված է լինելու, արտաքին լուսավորության, տեսահսկման սարքավորումներով:

11.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՌԻՍԿԵՐԸ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ և ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան 8-րդ փողոց, 2/1 հողամաս հասցեում՝ 6.20356 հա տարածքի վրա: Գործունեության տարածքը պատկանում է «Էլիտ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին՝ սեփականության իրավունքով:

Նախատեսվում է 5000 կՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 6300ԿՎԱ 6/0.8/0,8կվ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում և միացումը «Որոտան-2» 110/6

կՎ ենթակայանին 1.4կմ երկարության 6կՎ օդային գծով: Արևային ֆոտովոլտային կայանը արևային էլեկտրաէներգիայի լուծումներով էներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է: Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան կերպափոխելու էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գներով էլեկտրաէներգիայի սպառում:

Հաշվետվության շրջանակներում իրականացվել են արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության «Մինչև 2040 թվականը ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի» արևակայանների զարգացման (II. էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթությունները), ինչպես նաև էներգետիկայի զարգացման վերաբերյալ ուղեցույցների, ազգային ստանդարտներին, շինարարական նորմերին, տեխնիկական կանոնակարգի (ՏԿ)-ի պահանջներին համապատասխան:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է վեր հանել հնարավոր բոլոր ազդեցությունները, մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական էլակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Նախատեսվող գործունեության տարածքը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Տարածքի հողի նպատակային նշանակությունը փոխվել է՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների:

Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Արևակայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու՝

- արևակայանի և ենթակայանի շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազան արտանետումների:

- Ջրային և հողային ռեսուրսների օգտագործման:
- Լանդշաֆտի, կենդանական և բուսական աշխարհի փոփոխությունների:
 - Շինարարական թափոնների, Կայանի աշխատանքի ընթացքում և ապամոնտաժումից հետո առաջացող թափոնների կառավարման:
- Արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու արևային կայանի, ենթակայանի անվտանգ շահագործման, ջրային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, կենսաբազմազանության փոփոխությունների, ինչպես նաև թափոնների առաջացման հետ:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ: Այդ նպատակով օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ:

11.1. ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ.

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Աղյուսակ 8

Վնասակար նյութը		Արտանետումները
-----------------	--	----------------

	Տեսակարար արտանետումները, գ/կգ	գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /704 ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.101	0,0756
CH (ածխաջրածիններ)	0,243	0.000675	0.000505
NO2 (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.117	0,087
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.0119	0,0089
Ծծմբային անհիդրիդ		0,0083	0,32
Անկազմակերպ փոշու արտանետում		0,066	0.988

Շինարարության փուլում Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Արևային կայանի համար նախատեսված տարածքը 1,3կմ հեռու է ամենամոտ բնակելի տարածքից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ: Շինարարության փուլում Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ. Էլնելով գործունեության բնույթից, օդային ավազանի և կլիմայի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

11.2. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.

Համաձայն «Հայր և Որդի Տիտիզյաններ»ՍՊԸ-ը-ի կողմից կատարված ուսումնասիրության՝ ստորգետնյա ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա՝ 4 մ-ից խորը հորիզոններում: Գործունեության իրականացման հետևանքով մակերևութային ջրային ռեսուրսների աղտոտում չի կատարվելու, քանի որ տարածքում մակերևութային ջրահոսքերը բացակայում են: Ամենամոտ մակերևութային ջրային ռեսուրսը գտնվում է 1 կմ հեռավորության վրա:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կկնքվի գործունեության իրականացման շինարարության փուլում՝ համապատասխան ՋԹ ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, հստակեցնելով ջրի մատակարարման աղբյուրը:

Կեղտաջրերի հեռացում. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի շարժական բիոզուգարան՝ 1,0*1,5 չափերի՝ լվացարանով:

Բիոզուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարական փուլում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի լինելու, ուստի արևակայանի շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

11.3. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Համաձայն տարածքում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների հաշվետվության՝ գործունեության ենթակա տարածքում տեղ տեղ առկա է հողաբուսաշերտը՝ 0,0-0,20մ ավազակավի լցոնով: ՕԳ-ի անցկացման տարածքներն համայնքային հողեր են: Մալուխագծերն անկացվելու են գոյություն ունեցող ճանապարհի եզրերով:

Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի, տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, մալուխային խրամուղիների կառուցման, ՕԳ-ի հենասյուների տեղադրման ցանկապատի հենասյուների, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ:

Հանվող բուսահողի քանակ՝ 15.41մ3, գրունտի քանակը 496մ3, որից արևակայանի կետային հիմքեր՝ 330մ3, ենթակայանի 40մ3, հենասյուների 25մ3, խրամուղիների և այլնը՝ 101մ3: Հետլիցքի քանակը 415մ3, մնացորդային գրունտի քանակը՝ 81մ3 հեռացվելու է համայնքապետարանի կողմից համաձայնեցված վայր, -իրականացվելու է բնահողի տեղում տոփանում իսկ մեծ քարերը տեղափոխվելու է համաձայն ԱՄՅ- մեջ նշված վայրի համաձայնության՝ 7 կմ հեռավորության վրա:

Հողային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում են բնապահպանական կառավարման պլանով միջոցառումներ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում: Արևային մոդուլներով զբաղեցված տարածքում ստեղծվելու է նոր էկոհամակարգ, դադարելու է գերարածեցումը, առաջանալու են ստվերային տարածքներ, առաջանալու է հողի խոնավության նոր ռեժիմ, նկատի ունենալով թվարկված փոփոխությունները, հնարավոր են հողի որակի առավել դրական փոփոխություններ:

10.4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶՆՈՒԹՅՈՒՆ.

Արևակայանի և ենթակայանի կառուցման տարածքը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր են՝ հողատեսքը էներգետիկայի: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման տարածքում առկա են վայրի խնձորենի, շլորենի, տանձենի, տարածքում կան ալոճենու վարդագույն և նարնջագույն տեսակներ, մասրենու թփեր:

Կառուցվող տարածքում հաշվառվել է 18 մասրենու, 15 ալոճենու, 12 տանձենու և 18 շլորենու տարբեր հասակի և տեսակի թփեր և ծառատեսակներ:

Տարածքում շինարարական աշխատանքներ կատարելու դեպքում կվնասվեն թվով 63 տարբեր հասակի և տեսակի թփեր և ծառեր:

Վնասի Փոխհատուցման համար, մարզպետարանի առաջարկով հարակից տարածքում նախատեսվում է իրականացնել 25 մասրենու, 20 ալոճենու, 15 տանձենու, 22 շլորենու ծառատունկ: Փաստացի տնկվելու են 82 վայրի ծառեր և թփեր:

Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, քանի որ գործունեության ենթակա տարածքներն արդեն ենթարկվել են մարդածին ազդեցության՝ երկար տարիներ տարածքին հարակից տարածքում առկա են եղել արտադրական շինություններ՝ ինչը պահպանվել է տարածքին կից գոյություն ունեցող քանդված շինությունների մնացորդի տեսքով:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլում՝

Նկատի ունենալով տարածքի գերարածվածությունը, ենթադրվում է, որ կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, դրանք առավել քան դրական միտում են ունենալու:

10.5. ԹԱՓՈՆՆԵՐ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի և կենցաղային աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 3,4,5-րդ դասերին:

Առաջանալու է.

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ (ծածկագիր՝ 35131200 01 995)՝ 15կգ, չտեսակավորված այլումինի ջարդոն (ծածկագիր՝ 35310101 01 99 5)՝ 5կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 35310305 01 013)՝ 3կգ թափոնների տեսքով:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4) 4կգ/տարի:
- Շինարարական նյութերի մնացորդներ/ներառյալ շարքից դուրս եկած մեկուսիչներ/, գործունեության ընթացքում առաջացած շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 15մ3 ծավալով:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 81մ3:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) 4200կգ/տարի քանակով:
- Փայտի թափոններ՝ Մաքուր բնական փայտանյութից փայտե թափոններ (ծածկագիր՝ 17112000 01 00 5), առաջանում է ապամոնտաժվող հենասյուններից,

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է/ըստ ամենաձանրաբեռնված հերթափոխի/,

հետևաբար,

$$M=35*120=4200\text{կգ/տարի}$$

Նախատեսվող գործունեությունը տևելու է մինչև 1 տարի՝ ըստ ժամանակացույցի:

Թափոնների ճիշտ կառավարման և վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ. Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝

ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ տարեկան 4մ3 քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորներում յուղերի քանակությամբ:

- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)՝ 2կգ/տարի քանակով:

- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3)- 0,2մ3 :

- Քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ (ծածկագիր՝ 35131200 01 99 5)՝ 5կգ օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)՝ 3կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 35310305 01 013)՝ 4կգ քանակներով և այլն:

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Համաձայն ՀՀ Կառավարության 14 սեպտեմբերի 2006թ N 1343-N որոշման 6. Կետի «Թափոնների սկզբնական հաշվառումն իրականացվում է թափոնների գոյացման փաստացի ծավալի հիման վրա», ինչը գործունեության ընթացքում կիրականացվի ձեռնարկողի կողմից:

10.6. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ.

Համաձայն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտի մասնագետների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տարածքը ժամանակին ենթարկվել է մելիորացիայի, որոշ հատվածներում հարթեցվել, և դատելով տարածքին հարակից տարածքներում առկա գոմերի և այլ շինությունների մնացորդներից՝ երկար տարիներ օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով (որպես արոտավայր): Ուստի, եթե այստեղ հնագիտական հուշարձաններ անգամ եղել են, ապա արտաքին նշաններ չեն պահպանվել: Ուսումնասիրության են ենթարկվել նաև տարածքում առկա կտրվածքները, ինչի արդյունքում պատմա-մշակութային որևէ միավոր կամ դրանց հետքեր չեն փաստագրվել:

Սարավան գյուղի վարչական սահմաններում «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայան հիմնելու համար նախատեսված, ընդհանուրը՝ 6.20356 հա մակերեսով տարածքը պատմա-մշակութային միավորների վրա հնաարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ այստեղ պատմա-մշակութային միավորներ չեն փաստագրվել:

Նկար 11.



Լուսանկար 3. «Էլիտ Քնսթրաքշն» ընկերության կողմից Ջառիթափի համայնքի Մարավան գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի արևելյան հատվածը (օդալուսանկար)



Լուսանկար 6. «Էլիտ Քնոթարաքշն» ընկերության կողմից Սարավանի արևային կայանի շինարարության համար ընտրված տարածքի հարավային կողմում առկա կառուցապատման ապրոհներ

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

10.7. ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԶԳԱՅՈՒՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ.

Գործունեության վայրը չի առնչվում՝ վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

10.8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ

օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),

հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի,

աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Համաձայն կատարված «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել.

հնարավոր հրդեհային իրավիճակների,

կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների և անվտանգությունն ապահովելու նպատակով տարածքն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակներով, օդափոխության և հակահրդեհային համակարգերով, տեսահսկման այլ ազդանշանային սարքերով:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

10.9. ԱՂՄՈՒԿ և ԹՐԹՌՈՒՄ.

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա մեխանիզմների աշխատանքից առաջացող աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկի մակարդակը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ ամենամոտ բնակավայրից՝ 1,3 կմ հեռավորություն:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից բավական հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակչության վրա:

Էլեկտրական և մագնիսական դաշտ: Արևակայանը, ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ օդային զիծն ունի 1,4 կմ երկարություն, նկատի ունենալով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ 1,3 կմ, այն չի կարող զգալի էլեկտրական և մագնիսական դաշտ ստեղծել և որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և բավականին մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի վրա:

Արևային կայանի շինարարությունը և շահագործումը կատարվելու է ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1933-Ն որոշման՝ «ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ պահանջներին համապատասխան:

10.10. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ.

/Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն/.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված հետևյալ ռիսկերի հետ.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ էներգետիկայի, քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ, որից խուսափելու համար անհրաժեշտ է աշխատանքի ճիշտ կազմակերպում և աշխատանքի ընթացքում անվտանգության պահպանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ: Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) պատճառով:

Շինարարության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Կայանի կառուցման փուլում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

Շահագործման փուլում Արևակայանի, ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ոլորտին առնչվող ՀՀ օրենքների, կառավարության որոշումների, տեխնիկական կանոնակարգերի, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են միջոցառումներ, ուղղված՝ մարդու առողջության և աշխատանքի անվտանգության պահպանմանը:

10.11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.

Գործունեությունն իրականացվելու է Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի Մարավան բնակավայրի վարչական տարածքում: Գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու: Օդային զծի և մալուխագծերի ուղեգիծը նախագծված է միայն համայնքային հողերի տարածքներով: Նոր ենթակառուցվածքներ չեն նախատեսվում, գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհը: Նախատեսվող գործունեությունը համահունչ է «Հայաստանի հանրապետության Վայոց Ձորի մարզի 2017-2025 թվականների ռազմավարական զարգացման ծրագիր»-ի դրույթներին: Համաձայն ծրագրի՝ նախատեսվում է մարզում կարողությունների, արդյունաբերության և այլ ոլորտների զարգացում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, էներգիայի նոր աղբյուրների ներգրավմամբ:

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 35 մարդու համար:

Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի սոցիալական ազդեցություններ, կապված.

- Աշխատանքների իրականացման ընթացքում՝ կից գտնվող արոտավայրերի, ճանապարհի հնարավոր խաթարումներ:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծման և նոր աշխատատեղերի բացման հետ:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում Արևային կայանի կառուցման հետևանքով բացասական սոցիալական ազդեցություններ չեն նախատեսվում:

Լինելու են դրական սոցիալական ազդեցություններ, այն կնպաստի.

Հայաստանի հանրապետությունում ներմուծվող էներգառեսուրսներից կախվածության նվազմանը, կանաչ էներգիայի զարգացմանը:

Համայքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծմանը:

Աշխատատեղերի բացմանը:

Մարզի և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ընդգրկվելու են 2-4 աշխատողներ, որոնք աշխատելու են հերթափոխային գրաֆիկով:

Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

10.12. Լանդշաֆտ. Բարեկարգում.

Արևակայանի կառուցման արդյունքում կառաջանան լանդշաֆտի որոշակի փոփոխություններ՝ պայմանավորված հողային աշխատանքներով, որոնք լինելու են ժամանակավոր: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյունների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

Իսկ Կայանի կառուցման արդյունքում տեղի կունենա լանդշաֆտի փոքրածավալ փոփոխություն՝ պայմանավորված տարածքում արևային մոդուլների տեղադրմամբ: Լանդշաֆտի փոփոխությունը տեսանելի չի լինի բնակավայրերից՝ հեռավորության պատճառով: Իսկ ավտոճանապարհներից պատկերների փոփոխությունը էական չի լինի:

10.13 ԶՈՂԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԶԱՇՎԱՐԿ

Ենթակայանի և հենասյունների զբաղեցրած տարածքի 0.0115 հա մակերեսի համար հաշվարկվում է տնտեսական վնաս:

Հաշվարկները կատարվել են ըստ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն՝ «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» որոշումների:

ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԿԳ_{հող} = U_{բազա} \times U_{հող} \times Գ_q,$$

որտեղ՝

$ԿԳ_{հող}$ -ն գնահատվող հողամասի կադաստրային գինն է՝ արտահայտված դրամով,

$U_{բազա}$ -ն հողերի 1 մ² մակերեսի բազային արժեքն է՝ 217,8 դրամ,

$U_{հող}$ -ն գնահատվող հողամասի մակերեսն է 115մ²,

$Գ_q$ -ն բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցն է: Արևակայանը կառուցվում է **Շողակաթ /Շորժա/ բնակավայրի** վարչական տարածքում, որը գտնվում է X -րդ գոտու սահմաններում՝ գոտիականության գործակիցն է՝ 0.0207:

$$ԿԳ_{հող} = 115 \times 217,8 \times 0.0207 = 518,47 \text{ դրամ}$$

Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$U = ԾՀՎ + ԱՎՀ + ԾՈՒՎ,$$

որտեղ՝

Ա-ն ազդեցությունն է,

ԾՀՎ-ն վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են: Նման ծախսեր չեն նախատեսվում:

ԱՎՀ-ն վնասված հողամասի (գույքի) արժեքն է, տվյալ դեպքում՝ $ԿԳ_{հող}$:

ԾՈՒՎ-ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են (տվյալ դեպքում անտեսվում է, քանի որ կատարված է ընդհանուր նախագծային աշխատանքների կազմում, առանց առանձին տողով նշելու):

$$U = ԾՀՎ + ԿԳ_{հող},$$

$$ԱՎՀ = 0 + 518,47 = 518,47 \text{ դրամ}$$

11. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ)

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու արևային կայանի և ենթակայանի, ՕԳ-ի կառուցման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, օդային գծի անցկացման տարածքի կենսաբազմազանության պահպանման հետ, իսկ շահագործման փուլում՝ կայանի անվտանգ շահագործման հետ: Հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները ներկայացվում է նաև Բնապահպանական կառավարման պլանով՝ աղյուսակային տեսքով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

Շինարարության և շահագործման փուլեր.

11.1. ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ.

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով.

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,

- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կկատարվի փակ ծածկ ունեցող մեքենաներով, իսկ նյութերը տեղափոխող մեքենաները կփակվեն անջրթափանց թաղանթով,

- տարածքում նյութերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,

- շինարարական տեխնիկական և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

11.2 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.

Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,

- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին,

- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով,

- նվազագույնի հասցնել բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում, մեխանիկական եղանակով՝ բահերով:

- հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքներում խոտածածկ հատվածները,

- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով,

- ՕԳ-ի, մալուխագծի անցկացման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում,

- հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է տեղում՝ հետլցման և տարածքի հարթեցման, իսկ բուսահողը՝ բարեկարգման համար,

- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,

- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկական ժամանակավոր կայանել գրունտային ճանապարհի վրա,

- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.

- հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները,
- **ՕԳ-ի, մալուխագծի կառուցման ավարտից հետո՝ անմիջապես իրականացնել համայնքային և գյուղացիներին պատկանող հողերի վերականգնում:**

11.3 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շերով),
- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կտեղադրվեն ջրի բաքեր,
- շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,
- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության, պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,

- բետոնի լցվածությունը պետք է լինի վերահսկելի՝ ճանապարհներին բետոնանյութի արտհոսքը կանխելու նպատակով :

Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի բիոզուգարան:

Բիոզուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլ. Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.

- աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի սանհանգույց (բիոզուգարան),
- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- արևային կայանի վահանակների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի 500լ տարողության փակ բաք:

11.4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶՆՈՒԹՅՈՒՆ.

Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.

- Մարզպետարանի առաջարկով, իրենց կողմից հատկացված տարածքում փոխհատուցման նպատակով նախատեսվում է իրականացնել 25 մասրենու, 20 ալոճենու, 15 տանձենու, 22 շլորենու ծառատունկ / ընդամենը՝ 82 վայրի ծառեր և թփեր/ :
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնել համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,
- **շինարարական աշխատանքներն** իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

Շահագործման փուլ. Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.

ՕԳ-ի հենարանների լայնակների, ճուպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով,

հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,

խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:

11.5. ԹԱՓՈՆՆԵՐ

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- ՕԳ-ի, մալուխագծերի կառուցման տարածքում խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,

- նյութերի մնացորդները Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել, անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- ապամոնտաժվող փայտե սյունները հանձնվելու են «ՀԷՑ»ՓԲԸ-ին,

-մետաղական մասերի և նյութերի մնացորդները հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

-շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնի մնացորդներ, կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- կենցաղային աղբը հավաքել աղբահավաք տարողության մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,

-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ խառնել կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխել աղբավայր:

Շահագործման փուլ. Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- կառուցել 1 հատ 4մ3 տարողության յուղընդունիչ (հոր)՝ տրանսֆորմատորներից յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է մետաղական բաքի տարբերակով, իսկ մետաղական բաքի վրա՝ բետոնային ծածկ: Տեղադրվելու է տրանսֆորմատորների տակ:

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված վահանակներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ պահեստային շենքում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն 10 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակում չի նախատեսվում: Աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և ամենօր տեղափոխվելու է աշխատողների կողմից:

11.6. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ.

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով:

Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապէս կանգնեցնել բոլոր աշխատանքները,
- Տեղեկացնել տեղական իշխանութիւններին և մշակույթի նախարարոյթյան
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանութեան վարչութեան կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապէս դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին:

Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանութեան վարչութեանը) կողմից թույլտվութեան տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրութեան հետագա գործողութիւնները կազմակերպելու համար:

Շահագործման փուլում պատմամշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցութիւն չի նախատեսվում:

11.7. ԱՂՄՈՒԿ և ԹՐԹՌՈՒՄ.

Շինարարութեան փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկական օգտագործել միայն սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները,

շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով,

-Արևակայանի, ենթակայանի, ՕԳ-ի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարը, թրթռումը:

Շահագործման փուլ. Ենթակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից բավական մեծ՝ 1,3 կմ հեռավորության վրա, աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա, ուստի միջոցառումներ չեն նախատեսվում:

11.8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով՝ 2 հատ, հակահրդեհային կրակմարիչներով՝ 6 հատ, տեղադրվելու են 1 հատ ջրի բաք,

- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն,

- տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հասուն տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- ապահովել էլեկտահողորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը,

- օդային զծերը կառուցել էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (ԷԷՀ ՏԿ) գլուխ VI 46.1 կետի՝ չբնակեցված տարածքներում ապահովելով գետնից 6 մ բարձրություն,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել,

- տարերային երևույթների(քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

Շահագործման փուլ. արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանը և ենթակայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝

հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, ենթակայանի տարածքում՝ հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով,

-արևակայանի տարածքում տեղադրվելու են ավտոմատ կառավարման համակարգ, փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ՝ 12 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, լուսատուներ՝ 50Վտ հզորությամբ, 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ հաշվառքի կետում և 1 հատ մուտքի մոտ,

- պարբերաբար ստուգել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,

- գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

- անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 2-4 աշխատողի միջոցով:

11.9. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. Գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջության և անվտանգության պահպանման, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- շինհրապարակն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,

- մալուխային գծերի տեղադրումը կատարել, բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,
- շինհրապարակն ապահովվել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,
- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառելով մեքենաների կուտակումները,
- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով,
- իրականացնել տեխնիկական վերահսկողություն՝ նախագծային անհամապատասխանությունները ժամանակին շտկելու նպատակով,
- աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստով: Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի:

Շահագործման փուլ.

- Արևակայանի, ենթակայանի, օդային գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան,
- հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում,
- ՕԳ-ի անվտանգության գոտու պահպանում՝ 20մ,
- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ,
- ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից:

ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,

Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը

հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:

11.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ.

Գործունեության իրականացման ընթացքում սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է.

- բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,
- աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:

Գործունեության իրականացման շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր:

Հանրային քննարկումների ընթացքում համայնքի կողմից հարց բարձրացվեց և առաջարկվեց Ձեռնարկողին ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքին, մասնակցել համայնքում նախատեսվող ծրագրերի իրականացմանը, մասնավորապես ճանապարհների վերանորոգման, լուսավորության բարեկարգման աշխատանքներին և այլն:

Ձեռնարկողը պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերել համայնքին պայմանագրային հիմունքներով, վերջինիս հետ փոխադարձ համաձայնությամբ ճշտել համայնքային խնդիրների աջակցման ուղղությունները:

11.11 ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ և ԼԱՆԴՇԱՖՏ.

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,
- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտման, կանաչ տարածքների վնասման, աղտոտմանն ուղղված գործողությունները,

գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերելով հնարավորինս նախկին տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,
- օդային գծերի հենասյունների տեղադրման՝ 2 մ շառավղից դուրս տարածքներում և հարակից տարածքներում կատարվելու են կանաչ ցանքս՝ խոտի տեսքով, խախտված կանաչապատ տարածքի վերականգնման նպատակով,
- մաքրվելու են պանելների մակերևույթները,
- արևակայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու մետաղական ցանկապատով՝ դարպասներով:
- Արևակայանի տարածքի որոշ հատվածներ բետոնապատվելու են կամ լցվելու են մանրախճով:

Ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու:

12. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ/ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ/.

Սոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն:
- Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ շինարարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման նպատակով:

- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով:
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով:
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,
- Տրանսպորտային միջոցների երթևեկության վերահսկում՝ դաշտային տարածքներում վերջիններիս տեղաշարժը վերահսկելու նպատակով:
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով:
- Անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում՝ 2 աշխատողի միջոցով:

Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն:

Բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում, վերահսկում:

Կանոնավոր կատարել սոցիալական պարտավորությունները՝ համաձայն համայնքի հետ կնքած պայմանագրի: Կանոնավոր հանդիպել համայնքի ղեկավարության հետ փոխադարձ հետաքրքրության խնդիրները քննարկելու համար:

Աղյուսակ 8

N°	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Շինարարությանփուլ Օդային ավազան	<p>Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան`ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով` չոր և շոգ եղանակներին, - գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով, 	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		<p>-տարածքում նութերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,</p> <p>-շինարարական տեխնիկան և</p>		
--	--	---	--	--

		<p>տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</p> <p>Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:</p>		
2.	Հողային ռեսուրսներ	<p>Հողային ռեսուրսների ադտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,</p> <p>- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:</p>	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		<p>- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,</p> <p>- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին,</p> <p>- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու է խոտաբույսերով կամ հողաթմբերը ամրացվելու են, ծածկվելու են անջրթափանց թաղանթով,</p> <p>- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով,</p> <p>- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով,</p> <p>- մալուխագծի անցկացման, օդային զծի հենասյունների տեղադրման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում,</p> <p>- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս</p>		
--	--	--	--	--

		<p>հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում,</p> <ul style="list-style-type: none"> - հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է տեղում՝ հետլցման և տարածքի հարթեցման համար, - ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր, - շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, - շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանել գրունտային ճանապարհի վրա, - շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում: <p>Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները, 		
--	--	---	--	--

3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.</p> <p>գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շերով),</p> <p>աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կդեղադրվեն ջրի բաքեր,</p> <p>շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,</p> <p>ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզաբանի ջուրը,</p>	Կապալառու	ՕԳ-

		<p>ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,</p> <p>պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների անիվների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան,</p> <p>շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,</p> <p>շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի :</p> <p>Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի բիոզուգարան:</p>		
--	--	---	--	--

		<p>Բիոզուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>Շահագործման փուլում Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.</p> <p>աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շշերով,</p> <p>աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի սանհանգույց (բիոզուգարան),</p> <p>բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի 500լ տարողության փակ բաք:</p>		
4	Կենսաբազմազանություն	<p>- Մարզպետարանի առաջարկով, իրենց կողմից հատկացված տարածքում նախատեսվում է իրականացնել 25 մասրենու, 20 պլոճենու, 15 տանձենու,</p>	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		<p>22 շրթենու ծառատունկ /ընդամենը 82 վայրի ծառեր և թփեր/:</p> <ul style="list-style-type: none"> - Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնել համապատասխան պատասխանատու գերատեսչություններին, - շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր զոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար: <p>Շահագործման փուլում Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.</p>		
--	--	--	--	--

		<p>- ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով,</p> <p>- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,</p> <p>- խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:</p>		
5	Թափոններ	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- ՕԳ-ի, մալուխագծերի տարածքում խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,</p> <p>- նյութերի մնացորդները (մետաղական մասեր, մետաղալարեր, և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել,</p>	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		<p>անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,</p> <p>- շինարարական թափոնները՝ շինադր, բետոնի մնացորդներ, կիավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,</p> <p>- կենցաղային աղբը հավաքել աղբահավաք տարողության մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,</p> <p>- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ խառնել կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխել աղբավայր:</p> <p>Ենթակայանի տարածքում հնարավոր վրթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր</p>		
--	--	---	--	--

		<p>արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - կառուցել 1 հատ 4մ3 տարողության յուղընդունիչներ (հոր)՝ տրանսֆորմատորների տակ, յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է մետաղական բաք, իսկ մետաղական բաքի վրա՝ բետոնային ծածկ: - հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին, - հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, 		
--	--	--	--	--

		<p>- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,</p> <p>- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>Շահագործման փուլում առաջացող վնասված վահանակները կուտակվելու են պահեստում՝ փակ տարածքում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:</p>		
6	Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	<p>Հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին:</p> <p>Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող</p>	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:		
7	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները, տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, - պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները, - Արևակայանի, ենթակայանի, ՕԳ-ի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաճոպանների պարը, թրթռումը, <p>Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, աղմուկի մակարդակը</p>	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա, ուստի միջոցառումներ չեն նախատեսվում:		
8	Արտակարգ իրավիճակներ	<p>Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով՝ 2 հատ, հակահրդեհային կրակմարիչ՝ 6 հատ, տեղադրվելու է ջրի բաք, - աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն, - տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով, - հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - ապահովել էլեկտահողորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը, 	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		<ul style="list-style-type: none"> - օդային գծերը կառուցել էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (ԷԷՀ ՏԿ) գլուխ VI 46.1 կետի՝ չբնակեցված տարածքներում ապահովելով գետնից 6 մ բարձրություն, - էլեկտրահաղորդման մալուխների ավտոմոբիլային ճանապարհների հատման դեպքում անհրաժեշտ է պահպանել ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմատիվային փաստաթղթերի պահանջները, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել, - տարերային երևույթների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը: <p>Շահագործման փուլում արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p>		
--	--	--	--	--

		<p>- արևակայանն և ենթակայանն ապահովված են լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով,</p> <p>-արևակայանի տարածքում տեղադրվելու են փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ, 12 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ հաշվառքի կետում և 1 հատ մուտքի մոտ,</p> <p>- պարբերաբար ստուգել աղետների հակազդելու համակարգերի աշխատունակությունը,</p> <p>- գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,</p> <p>- անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով</p>		
--	--	--	--	--

		նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 3 աշխատողի միջոցով:		
9	Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	<p>Գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջության և անվտանգության պահպանման, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - շինհրապարակն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, - աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ), 	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		<p>- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,</p> <p>- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,</p> <p>- ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,</p> <p>- շինհրապարակն ապահովվել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառելով մեքենաների կուտակումները,</p> <p>- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթեկության խոչընդոտումը բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով,</p>		
--	--	---	--	--

		<p>- իրականացնել տեխնիկական վերահսկողություն՝ նախագծային անհամապատասխանությունները ժամանակին շտկելու նպատակով,</p> <p>-աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստով: Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ.հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան:</p> <p>Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի:</p> <p>Շահագործման փուլ.</p> <p>- Արևակայանի, ենթակայանի, օդային գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան,</p> <p>-հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում,</p>		
--	--	--	--	--

		<p>- ՕԳ-ի անվտանգության գոտու պահպանում՝ 20մ,</p> <p>- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ,</p> <p>- ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից,</p> <p>-ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,</p> <p>-Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:</p>		
10	Սոցիալական	Գործունեության իրականացման ընթացքում սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է.	Կապալառու	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

		<p>-բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,</p> <p>-աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի են հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,</p> <p>-կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով,</p> <p>- բացվելու են նոր աշխատատեղեր:</p> <p>Շահագործման փուլում գործունեության իրականացումն ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ բացվելու են նոր աշխատատեղեր՝ 2-4 աշխատողների համար:</p> <p>Նախաձեռնողը ֆինանսական աջակցություն կցուցաբերի համայնքին, կմասնակցի համայնքում նախատեսվող ծրագրերի իրականացմանը, մասնավորապես ճանապարհների վերանորոգման,</p>		
--	--	--	--	--

		<p>լուսավորության քարեկարգման աշխատանքներին և այլն:</p>		
11	Բարեկարգում, Լանդշաֆտ.	<p>-բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,</p> <p>-հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,</p> <p>-գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը</p> <p>-շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,</p> <p>-տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերելով հնարավորինս նախկին տեսքի,կատարել տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,</p> <p>Շահագործման փուլում.</p> <p>-օդային զծերի հենասյունների տեղադրման` 2 մ շառավղից դուրս տարածքներում և հարակից տարածքներում կատարվելու են կանաչ ցանքս`</p>		

		<p>խոտի տեսքով, խախտված կանաչապատ տարածքի վերականգնման նպատակով,</p> <ul style="list-style-type: none"> - մաքրվելու են պանելների մակերևույթները, - արևակայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է մետաղական ցանկապատով՝ դարպասներով: 		
--	--	---	--	--

14. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ (ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ) ՊԼԱՆ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ և ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐ)

Աղյուսակ 9

Շինարարության փուլ	Պարբերականությունը (ժամանակամիջոցը)	Մոնիթորինգի եղանակը	Մոնիթորինգի վայրը	Պատասխանատու, Վերահսկող
1. Օդային ավազան արտանետումները մեղմում՝ օդի աղտոտումը	Ամենօրյա	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության	Շինհրապարակ, գործունեության	Կապալառու

կանխելու նպատակով (փոշի, ծխազագեր)	Ամիսը 1 անգամ	դեպքում չափազրու՛մ՝ համապատասխան մասնագետի կողմից	տարածք, հարակից տարածքներ:	
2. Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ հողի աղտոտումը կանխելու նպատակով:	Պարբերաբար	Տեսողական ուսումնասիրություններ	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ, հարակից տարածքներ:	Կապալառու «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
3. Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում:	Զպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին	Տեսողական ուսումնասիրություններ՝	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ	Կապալառու «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
4. Թափոնների հաշվառում փաստացի ծավալների հիման վրա:	Համաձայն ՀՀ Կառավարության 14 սեպտեմբերի 2006թ N 1343-N որոշման տարին մեկ անգամ հաճախականությամբ:		Գործունեության տարածք:	Կապալառու «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

5. Արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության վերահսկում	Ամենօրյա Պարբերաբար	Տեսողական ուսումնասիրություններ,	Գործունեության տարածքում, շինհրապարակում	Կապալառու «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
6. Աղմուկի մակարդակի տատանումներ	Ամենօրյա, շաբաթը մեկ անգամ	Աղմկաչափ	Շինհրապարակում	Կապալառու
7. Մարդու առողջություն և անվտանգություն	Ամենօրյա	Հարցումների իրականացում, համապատասխան ցուցատախտակների տեղադրում:	Շինարարության ընթացքում	Կապալառու «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
8. Տարածքի բարեկարգում	Շինարարության ավարտից հետո	Տեսողական ուսումնասիրություն:	Գործունեության տարածք, ճանապարհներ	Կապալառու, «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Շահագործման փուլ				
1. Կենսաբազմազանության ապրելավայրերի և աճելավայրերի	Հինգ տարին մեկ անգամ	Մասնագիտական ուսումնասիրություն:	Ենթակա տարածք	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Փոփոխությունների վերաբերյալ հսկողություն				Համապատասխան մասնագետներ
<p>2. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,</p>		Մասնագիտական ուսումնասիրություն:	Ենթակա տարածք:	
<p>3. Արտակարգ իրավիճակների հսկողություն՝ վթարային իրավիճակների նվազեցման նպատակով</p>	<p>Համապատասխան հակահրդեհային միջոցների առկայություն</p>	Պարբերական Ստուգումներ	Ենթակայանի տարածքում	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

	Անվտանգության համակարգերի սարքյունքների վերահսկում:	Մշտական մոնիթորիգ՝ աշխատողների միջոցով:		
4. Սոցիալական	Գործունեության իրականացման ընթացքում	Անվտանգության գոտու պահպանում: Կանոնավոր կատարել սոցիալական պարտավորությունները՝ ամրագրված համայնքի հետ կնքված պայմանագրում:	Պայմանագրերով ամրագրված պարտավորություններ	«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ Համայնք
5. Թափոններ	Թափոնների հաշվառում փաստացի ծավալների հիման վրա:	Համաձայն ՀՀ Կառավարության 14 սեպտեմբերի 2006թ N 1343-N որոշման տարին մեկ անգամ հաճախականությամբ:		Գործունեության տարածք: Կապ «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ»

15. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանարապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի Սարավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հանրային քննարկմանը ներկա էին համայնքի, գործունեություն իրականացնող ընկերության ներկայացուցիչները, ազդակիր համայնքի բնակիչներ: Հանրային քննարկմանը ներկայացվել է նախատեսվող գործունեության նախագծային լուծումները և գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց մեղմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Քննարկումների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը կողմ են արտահայտվել արևակայանի կառուցմանը: Հավելված 6,7,8:

Նախագծի վերաբերյալ համայնքի ավագանին որոշում է ընդունել՝ գործունեության իրականացմանը համաձայնություն տրամադրելու վերաբերյալ:

16. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ընկերությունում կներդրվի բողոքների ուսումնասիրման ընթացակարգ՝ գործունեության իրականացման ընթացքում առաջացած շեղումների. օդային ավազան արտանետումների,

հողային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև գյուղացիների հողագործական աշխատանքներին խոչընդոտելու վերաբերյալ բողոքներին արձագանքելու, շեղումները, դրանց պատճառները բացահայտելու, ժամանակին արձագանքելու և թերությունները վերացնելու նպատակով:

17. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
 ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ
 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.

Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներում Արևային Էներգիան օգտագործվելու է տնտեսության տարբեր բնագավառներում՝ ջեռուցման, լուսավորության, տաք ջրի, ավտոտրանսպորտի, վառելիքի արտադրության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում: Արևային և քամու վերականգնվող էներգիան այսօր աշխարհում էլեկտրաէներգիայի ամենաարագ աճող աղբյուրներն են և տեխնոլոգիապես ավելի առաջադեմ, տնտեսապես մատչելի են: Սա պայմանավորված է մի շարք դրական գործոններով, ինչպիսիք են վառելիքի ծախսերի, ջերմոցային գազերի և այլ աղտոտող թափոնների արտանետումների կրճատումը: 2011 թվականին Էներգետիկայի միջազգային գործակալության զեկույցում նշվել է, որ արևային էներգիայի տեխնոլոգիաները, ինչպիսիք են ֆոտոզալվաները, արևային տաք ջուրը և կենտրոնացված արևային էներգիան, կարող են ապահովել աշխարհի էներգիայի մեկ երրորդը մինչև 2060 թվականը, սահմանափակել [կլիմայի փոփոխությունը](#) և անցնել վերականգնվող էներգիայի: Արեգակից ստացված էներգիան կարող է առանցքային դեր ունենալ համաշխարհային տնտեսությունը ապաածխաթթվայնացնելու գործընթացում և էներգախնայողության բարելավման ոլորտում:

Համաձայն Էներգետիկ Ember վերլուծական կենտրոնի զեկույցի՝ 2022 թվականին քամու և արևի արտադրության աճը ծածկել է էլեկտրաէներգիայի համաշխարհային պահանջարկի աճի 80%-ը: Քամին և արևը 2022 թվականին հասել են համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության ռեկորդային 12%-ի՝ մեկ տարի առաջվա 10%-ի դիմաց:

Հայաստանում ջերմոցային գազերի արտանետման ամենամեծ մասնաբաժինը Էներգետիկայի ոլորտինն է, որը CO2-ի ընդհանուր արտանետումների մեջ կազմում է 64%: ՀՀ-ում 1 կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրության համար առաջանում է մոտավորապես 0.4 կգ ածխածնի երկօքսիդ: Երբ տեղադրում ենք արևային կայաններ կամ իրականացնում ենք

ջերմամեկուսացման աշխատանքներ, կանխում ենք ածխածնի երկօքսիդի արտանետումը մթնոլորտ: Վերականգնվող էներգետիկայի զարգացումը կարևորվում է ոչ միայն էներգետիկայի ոլորտի դիվերսիֆիկացիայի, այլ նաև ջերմոցային գազերի արտանետումների նվազման տեսանկյունից: Էներգիայի օգտագործումը կնպաստի Հայաստանի հանրապետության [էներգետիկ անվտանգության](#) ավելացմանը, ապավինելով բնածին, անսպառ և հիմնականում ներմուծումից անկախ ռեսուրսին, կրթարձրացնի էներգետիկ համակարգի կայունությունը, կախվածությունը ածխաջրածինների պաշարներով հարուստ վառելիքից, կնվազեցնի շրջակա միջավայրի աղտոտումը: ՀՀ կառավարությունը խթանում է արևային և այլ այլընտրանքային կայանների կառուցման և հետագա զարգացման ներդրումային ծրագրերը՝ հատկապես չգազիֆիկացված համայանքներում: Արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար, հատկապես այն դեպքում երբ հանրապետությունը հարուստ է արևային էներգիայի գոտիներով/ Globalsolaratlas.info/: 2023թ. հոկտեմբերի 26-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. հունվարի 14-ի X 48-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ վերականգնվող էներգետիկայի հզորությունը մինչև 2040թ.-ը կհասցվի 2000 ՄՎտ-ի, որից 1500 ՄՎտ-ն արևային, իսկ 500 ՄՎտ-ն հողմային էներգետիկայի հաշվին:

«ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից կառուցվող արևակայանը համահունչ է ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼԻ (2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐ) ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N 398-Լ որոշման պահանջներին:

Սարավան բնակավայրում իրականացված հանրային քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքի ավագանու որոշմամբ տրվել է համաձայնություն՝ նախատեսվող գործունեության իրականացմանը, որն էլ հիմնավորում է նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանությունը համայնքի հեռանկարային զարգացման հիմնադրույթային փաստաթղթերին՝ համայնքի հեռանկարային զարգացմանը:

18. ՓԱԿՄԱՆ և ՀԵՏՓԱԿՄԱՆ ՓՈԻԼԵՐ.

Ընկերության կողմից գործունեության հնարավոր դադարեցման դեպքում վերջինիս կողմից նախատեսվում են գործողությունների պլան, որը ներառում է.

սարքավորումների, արևային պանելների, էլեկտրասյունների ապամոնտաժում,

արևակայանի, ենթակայանի և օդային ուղեգծի տարածքների կարգաբերում, նախկին տեսքի բերում:

Գործողությունները կատարվելու է համայնքի վերահսկողությամբ:

Փակման փուլի ազդեցություն. Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև աշխարհի զարգացած երկրներում, դեռևս գոյություն չունի արևային կայանների սարքավորումների, մասնավորապես որպես թափոնատեսակ՝ ֆոտոէլեմենտներ պարունակող պանելների և այլ ուղեկցող մասերի պահպանման, տեղակայման լուծումները:

Քանի որ արևային կայանի պանելները (батаре́йка) պատրաստվում են տարբեր ֆոտոէլեմենտներ պարունակող (ապակի, պլաստիկ) նյութերից, որոնք իրենց մեջ պարունակում են (կապար, քրոմ, կադմիում, սիլիցիում և այլն), ուստի դրանց ուտիլիզացիան և վերամշակումը հանդիսանում են Հայաստանի հանրապետության համար հրատապ լուծում պահանջող խնդիր, որի լուծումը պետք է տրվի ՀՀ կառավարության կողմից մշակված համապատասխան օրենսդրության, ծրագրի հիման վրա, հաշվի առնելով առաջավոր զարգացած երկրների փորձը: Հատկապես առանց կադմիումի բարակ թաղանթով արևային մոդուլների ստեղծման աշխատանքներն արդեն հաջողությամբ ընթանում են առաջավոր զարգացած երկրներում:

Միջոցառումներ. Մինչև համապատասխան ռազմավարության մշակումը ընկերությունը նախատեսում է կիրառել հետևյալ հնարավոր տարբերակները.

- հնարավորության դեպքում վերանորոգել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,
- ֆոտոէլեմենտներ պարունակող պանելները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում, չկուտակել բաց վիճակում,
- վաճառել թափոնների հավաքմամբ զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրներին, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,
- ֆոտոէլեմենտներ պարունակող թափոնները հանձնել էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ հավաքող կետերին կամ կազմակերպություններին (նաև արտասահմանյան)՝ կազմակերպված թափոնների հավաքագրման նպատակով,
- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային պանելների արտադրությամբ և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային պանելները:

Գործունեության փակման, կամ լուծարման, Լիցենզիայի դադարեցման նպատակով Ձեռնարկողի կողմից կատարվելու է պայմանագրերի երկկողմանի դադարեցում, ապամոնտաժվելու են բոլոր սարքավորումները, պանելները, էլեկտրահաղորդման հենասյունները, էլեկտրահաղորդման գծերը կամ փախադարձ համաձայնությամբ փոխանցվում են համայնքին կամ ընկերությանը: Ենթակայանի տարածքում կապամոնտաժվեն տրանսֆորմատորները, յուղահեռացման համակարգերը և այլ սարքավորումները: Ապամոնտաժված պիտանի սարքավորումները, պանելները կվաճառվեն, իսկ խոտանը(ոչ պիտանի մետաղական մասեր, լարեր և այլն) կտեսակավորվի և կհանձնվի համապատասխան մասնագիտական կազմակերպություններին: Բետոնյա մնացորդները կհանձնվեն ճանապարհաշինարարական ընկերություններին: Տարածքը կբարեկարգվի, կբերվի նախկին տեսքի՝ համայնքի վերահսկողությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վայոց Ձորի մարզի 20223-2025թթ. ռազմավարական զարգացման ծրագիր:

«ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամաններ:

Էներգետիկայի միջազգային գործակալությունը (IEA): Էներգախնայողության ցուցանիշներ. Քաղաքականության շրջանակ, Էդ. IEA, 2014 թ.:

ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամաններ:

Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ:

ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:

ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N87 արձանագրություն:

СП.485.13130.2021:

ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն:

Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ

փաստաթղթերի համակարգ:

Էներգետիկ Ember վերլուծական կենտրոնի զեկույց՝ 2022 թ:

Հավելված 1.

Տարածքի սեփականության իրավունքի վկայականը, պետական ռեգիստրը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԱՏՄԱՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 24 հոկտեմբերի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԷԼԻՏ-ՔՆՆՐԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Վայոց ձոր, համայնք Վայք գյուղ Սարավան 8-րդ փողոց 2/1 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Կանոնադրական կապիտալում անշարժ գույքի ներդրման պայմանագիր 03.05.2021թ թիվ 1363, 1364, համայնքի ղեկավարի հասցեի տրամադրման որոշում 22.09.2023թ. հ.187-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 10-039-0307-0078

Մակերեսի չափը (հա)՝ 6.20356

Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 24102023-10-0033, գաղտնաբառ՝ Y37TXS8FBMZK

Փաստաթղթի խնամքը և վավերացմանը կառուցված հատաստի կոմիտեի
www.e-cadastre.am կայքի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նախատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԱՐՏԻՆ ՋԻՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 24102023-10-0033, գաղտնաբառ՝ Y37TXS8FBMZK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կառուցված է ստանդարտ կադաստրային կոմպլեքսի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄՆԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2023-09-05

«ԷԼԻՏ-ՔԼԱՍԹՐԱՔՇՆ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 282.110.1171075

Հիմնադրման տարի 2021

Գրանցման ամսաթիվ 2021-04-02

Գործունեության ժամկետ **Անժամկետ**

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 52584972

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 01024539

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովարդի ծածկագիր) 47111075

Էլ. փոստ waruz8@wp.pl

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՇՆՐԲ. / Տ / 10 ԵՐԵՐՈՒՆԻ 0020
ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս 099622082

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ՎԱՐՈՒԺԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԵՆԱԴԻԻ

Անձնագրային տվյալներ 007436645 2015-08-14 001

Հասցե 1 Փ. / Տ / 6 ՀԱԼԻԳՈՐ 3211 ՏԱԹԵՎ ՍՅՈՒՆԻՔ
ՀԱՅԱՍՏԱՆ

Էլեկտրակներգիայի արտադրության լիցենզիան



Համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ**

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱՎԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 06 25 մարտ 2024թ.

Օբյեկտ

5 ՄՎՏ հզորությամբ « ԷԼԻՏ սուլար 1» արևային կայանի, 644 ՕԳ-ի և 6300 ԿՎա հզորությամբ ենթակայանի կառուցում, արևային կայան, միջին ռիսկայանության աստիճան, 4-րդ

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակիրճ ընդրոշումը, հզորությունը, ռիսկայանության աստիճանը (կարգադրիան))

Աշխատանքային նախագիծ

նախագծային փաստաթղթերի մշակման համար

(նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը

ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Սարավան բնակավայր 8-րդ փողոց, 2/1 հողամաս

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող

ԷԼԻՏ ՔՆՍՏՐԱՔՇՆ ՍՊԸ , ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՀԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ 2 ՆՐԲ., 10 Տ., +37493552787 01024539

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

Դիմումատրուի հայտը՝ 22.03.2024.-ի սեփականության իրավունք, N 10-039-0307-0078 վկայական

(կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

6 ամիս

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

Բնակելի կառուցապատման գոտուց դուրս, էներգետիկայի

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

6,20356 հա մակերես

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի անվանումը

Չկառուցապարված, հարթ

(ռեյիֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդան ենթակա) անկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական կյանքերը և այլն), կանաչապարտը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

Առկա են

(ճանապարհների անկայությունը, երկաթուղային կրանսպորտի մոտեցումները և այլն)

5. Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Առկա են

(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, կույր ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախազգեվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ սպորտդահլիզա)

6. (*) Կից հողամասեր

Առկա են

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ենթակայացված պլանային)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակազծային սահմանափակումներ

-

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների ինժեներապրահնապարտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկարագրի սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԼԱՆՁՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով Մ 1:500)

9. Ճարտարապետահատակազծային պահանջներ

Ըստ նորմարիվ փաստաթղթերի

(նշելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմարիվաբեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ասկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, փակիքների, արկաքիչի դռների, պարտիանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

250.0 մ

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

կից

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

0,80 մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը

0,00015%

(կառուցի (կառուցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.7. այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկարմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Նախարեսել

(Իսամաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Նախարեսել

(Իսամաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Նախարեսել

(Իսամաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Ըստ տեխ. պայմանների

(Իսամաձայն N 1 Խավեղվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նյալնորային պլանների)

12.5.թույլ հոսանքներ	-
12.6.աղբահանություն	-
13.Տարածքի ինժեներական նախապատրաստում	Աճող հողի հարթեցում <i>(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)</i>
14.Բարեկարգում	- <i>(բանդաֆրային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փորձը ձևեր, ցանկապահում, գոյնազոյն և այլն)</i>
15.Շինարարական նյութեր	- <i>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տակնըների, ճակատների բնույթների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)</i>
16.Պաշտպանական կառույցներ	- <i>(պարականոց իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)</i>
17.Հակահրդեհային պահանջներ	Ըստ գործող նորմերի <i>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)</i>
18.Հաշմանդամների և քնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	-
19.Շրջակա միջավայրի պահպանում	Շին. աղբի տեղափոխում 7 կմ <i>(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)</i>
20.Շինարարության կազմակերպում	- <i>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)</i>
21.Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	25/03/2024-ից մինչև 25/09/2024-ը, <i>(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)</i>

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22.Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	Նախագծերի պարզ, ՇՄԱԳ և պետական համալիր փորձաքննություն <i>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)</i>
23.Միջանկյալ համաձայնեցում	- <i>(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի ԾԴ-րդ կետով քախարեսված դեպքում)</i>
24.Հասարակական քննարկումներ	-

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ
մասնագիտական
եզրակացությունների ստացում

Վայք

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝
հուշարձանների ու բնության ամրապահության և այլ փազրված մարմինների հետ, ինչպես
ևսև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական
ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային
պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Կ.Տ.



ՄԻԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ Երևան, Ա. Արմենակյան փողոց 127

№ ՏՊ-6(10)/0055-Հ

«30» 09 2022թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ

Տրվում է
Պատճենը


«Էլիտ-Քեսթրաքշն» ՍՊ ընկերությանը
«Արաքս» մ/ճ-ի գլխավոր ճարտարագետ
Գ.Հակոբյանին
«Էլեկտրաէներգետիկական համակարգի
օպերատոր» ՓԲԸ գլխավոր ճարտարագետ
Գ.Բայանին
«Էլիտ Սոլար 1»
Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջառիթափ գյուղ
Սարավան 8-րդ փողոց 2 և 4 հողամասեր
ԼԷ № 0708
5000 կՎտ

Արևային կայանի անվանումը
Կայանի կառուցման հասցեն


Լիցենզիայի համարը
Արևային կայանի հզորությունը

- Արևային կայանի տարածքում կառուցել համապատասխան հզորության ենթակայան:
- Ենթակայանը միացնել «Որոտան-2» 110/6 կՎ ենթակայանի 6 կՎ ԲԱ-ին՝ ճյուղավորումով կառուցելով մոտ 1.4 կմ երկարության 6 կՎ լարման էլեկտրահաղորդման գիծ:
- Ռեյնական պաշտպանությունը և ավտոմատիկական (ՌՊԱ) նախատեսել համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի N42-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրատեղակայանքների պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքին ներկայացվող պահանջների, տեխնիկական կանոնակարգի, ՌՊԱ սարքվածքների ծավալը և սկզբունքները համաձայնեցնելով «ՀԷՑ» ՓԲ և «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունների հետ:
- Նախագիծը նախապես համաձայնեցնել «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրինության, «Հաշվարկային Կենտրոն», «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունների և համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ:


Արևակայանի հատակագծերը, կոորդինատները,



Կոորդինատային տվյալներ՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով



Արևակայանի հատակագիծը, կոորդինատները



ՈՎ	Աշխարհագրական բաժնային	Աշխարհագրական եզրագրային
P 1	8558689.367	4397674.832
P 2	8558716.623	4397649.283
P 3	8558761.205	4397578.224
P 4	8558720.159	4397298.126
P 5	8558650.949	4397304.694
P 6	8558639.763	4397316.518
P 7	8558712.671	4397411.680
P 8	8558568.868	4397547.569
P 9	8558509.797	4397511.561
P 10	8558413.435	4397581.128
P 11	8558490.499	4397694.519

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՆԵՐ

- Ապահովման ճիւղի ճանապարհ
- Գոյություն ունեցող ճիւղի վայրեր հեռարան
- Գոյություն ունեցող ճիւղի վայրեր բարդ հեռարան
- Գոյություն ունեցող 110 կՎ հեռարան
- Գոյություն ունեցող 110 կՎ ՕԳ
- Գոյություն ունեցող ճիւղի ՕԳ
- Ֆոտովոլտային վահանակ
- Ցանկապատ
- Բեռնային կողողմանային կետ

ՃԱՆՈՒՌՈՅՈՒՆ

1. Ընդհանուր շինարարական նախագիծը պետք է համապատասխանի ՀՀ շինարարության մասին օրենքի և այլ օրենսդրական ակտերի պահանջներին:
2. Նախագիծը պետք է համապատասխանի ՀՀ շինարարության մասին օրենքի և այլ օրենսդրական ակտերի պահանջներին:

Հավելված 6

Ավազանու որոշումը համաձայնության վերաբերյալ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

15 ՄԱՅԻՍԻ 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ N 55-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ և հիմք ընդունելով սույն թվականին կայացած հանրային լսումների արձանագրությունները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն «ԷԼԻՏ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից Վայք համայնքի Սարավան բնակավայրի 8-րդ փողոց, 2/1 հասցեում գտնվող 6,20356 հա մակերեսով հողատարածքի վրա արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
 ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
 ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ
 ԻԱԶԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
 ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
 ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
 ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԻԽԻԹԱՐ
 ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ
 ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԻԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստելը՝
 ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ*



Հավելված 7

Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

06.05.2024թ.

Վայր Կամայնք՝ Սարավան բնակավայր

2024թ. մայիսի 06-ին ժամը 12.00-ին՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանապապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ Վայրց Ձորի մարզի Վայր Կամայնքի Սարավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է «ԷԼԻՏ-ԶԼՍԹՐԱԶՇՆ»ՍՊԸ-ի կողմից Վայրց Ձորի մարզի Վայր Կամայնքի, Սարավան 8-րդ փողոց 2/1 հողամասում նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանի կառուցման գնահատման հաշվետվության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

Հանրային քննարկմանը ներկա էին գործունեության իրականացման Սարավան ազդակիր բնակավայրի ղեկավարը, բնակավայրի բնակիչներ, Ձեռնարկողը, հաշվետվությունը մշակող ընկերության ներկայացուցիչները:

Հանրային քննարկումը բացեց՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը մշակող «Նովալ»ՍՊ ընկերության ներկայացուցիչ Թ. Նուրիջանյանը, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու Սարավան բնակավայրի վարչական տարածքում՝ 6.20356 հա տարածքի վրա և հողի նպատակային և գործառնական նշանակությունը էներգետիկ հողատեսք է:

Հանրային քննարկման ընթացքում ելույթ ունեցան՝

Ձեռնարկողի՝ «Էկոփի»ՍՊ ընկերության ներկայացուցիչ Հարություն Ավագյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության իրականացման նախագծային լուծումները, նշելով որ «ԷԼԻՏ-ԶԼՍԹՐԱԶՇՆ»ՍՊԸ-ն իր գործունեությունն իրականացնելու է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ընկերության տրամադրված լիցենզիայի հիման վրա: Գործունեության տարածքում կատարվելու են միայն հողային աշխատանքներ: Կառուցվող արևային կայանը միացվելու է «Որոտան» 2 110/6 կՎ ենթակայանի 6ԿՎ ԲՄ-ին՝ 1.4կմ երկարության 6կՎ լարման էլեկտրահաղորդման գծով: Կարևորեց, որ բացվելու են նոր աշխատատեղեր՝ շինարարության և շահագործման փուլերում: Առաջնահերթությունը տրվելու է համայնքի բնակիչներին:

Թ. Նուրիջանյանը ներկայացրեց արևակայանի կառուցման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության, մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարության և շահագործման փուլերում, ինչպես նաև հնարավոր ազդեցությունների կանխմանն ու մեղմմանն ուղղված բնապահպանական միջոցառումները: Մասնավորեցրեց թափոնների լուծման խնդիրները շահագործման փուլերում, դրանց վնասակար ազդեցությունների մեղմման ուղղված միջոցառումները: Նշեց, որ տարածքը ենթարկվել է մարդու ազդեցությանը, քանի որ կից գտնվում են շինությունների մնացորդներ: ԳԱԱ

Հնագիտության և ազգագրության հաստիտուտի մասնագետների կողմից կատարվել է տարածքի ուսումնասիրություն՝ հնագիտական և պատմամշակութային շերտերի հայտնաբերման նպատակով, համաձայն որի տրածքում վերջիններիս առկայությունը բացակայում է: Ներկայացրեց նաև արևակայանների կառուցման համառոտ նկարագիրը՝ նշելով, որ կառուցվելու 5,000 ՄՎտ հզորության արևային կայան՝ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով, ենթակայան: Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգվելու է:

Սարավանի բնակիչները հարց բարձրացրեցին գործունեության տարածքի գտնվելու վայրի վերաբերյալ:

ՀՊ Ավագյանը պատասխանեց, նշելով որ տարածքին կից գտնվում են շինությունների մնացորդներ, որը նախկինում օգտագործվել է որպես աշխատողների համար պանսիոնատ:

Բնակիչները հարց բարձրացրեցին բնակիչներին պատկանող կից հողատարածքների հետ գործունեության տարածքի համընկնման վերաբերյալ:

Սարավանի վարչական ղեկավար Ռ. Մանուկյանը պատասխանեց, որ գործունեության տարածքը գյուղացիների հողատարածքներից բաժանվում է գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

ՀՊ Ավագյանը հավելեց, որ մանրամասն հաշվարկել են նախագծային լուծումները, որպեսզի գյուղացիների հողատարածքների հետ համընկնումներ չլինեն:

Բնակիչները հարցՖ բարձրացրեցին աշխատատեղերի քանակի, աշխատավարձի չափի, Սարավան բնակավայրում սոցիալական ներդրումների վերաբերյալ:

Հ. Ավագյանը պատասխանեց, որ շինարարության փուլում լինելու է մոտ 20 աշխատատեղ՝ մոտ 10000 դրամով օրավարձով, շահագործման փուլում՝ 4-6 աշխատող, իսկ սոցիալական ներդրումների ուղղությունները կքննարկվեն համայնքի հետ, հաշվի առնելով նաև Սարավան բնակավայրի խնդիրները:

Այլ հարցադրումներ չեղան:

Վարող՝ Սարավան բնակավայրի
վարչական ղեկավար՝ Ռ. Մանուկյան:

«Էկովիլ»ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ավագյան



(Handwritten signature)

(Handwritten signature)

Մասնակիցների ցանկ

«ԷԼԻՏ ԲՆԱԹՐԱԲՇՆ» ՍՊԸ-ի կողմից Վայոց ձորի մարզի Վայք համայնքի, Սարավան 8-րդ փողոց 2/1 հողամասում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/: 06.05. 2024թ.

Գ/Գ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1	Ներսիս Կարամյան	114 ՏՏ օրթՆ	033-70-33-55	
2	Բաճախյան Եսայիս	«Զառչույց» ԱՊԸ	093-146492	
3	Սեֆր Գրիգորյան	ԸՆԹՎԱԼՏ ԲԳԸ	027706706	
4	Քանյան Շահապետ	Վարապետյանի շենք	098310868	
5	Քանյան Նուհար	Վարապետ Քանյան Ը.Ղ. 24	099212243	
6	Զարգրան Վարդան	«Զարգրան» ԱՊԸ-ի Ներկայացուցիչ	098556561	
7	Օրբելի Բրգուս	«Զարգրան» ԱՊԸ-ի Ներկայացուցիչ	091070006	
8	Սիմոնյան Վահագն	«Զարգրան» ԱՊԸ-ի Ներկայացուցիչ	016608980	
9				
10				
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				

Հավելված 8. Արտանետումների հաշվարկ

Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում հորատող, հարթեցնող և ինքնաթափ մեքենաների: Փորման-բեռնման աշխատանքները իրականացվում՝

2 ամիս x 26 օր/ամիս x 8 ժամ/օր = 416 ժամ:

Հաշվարկները կատարված են համաձայն “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987 մեթոդակարգի հետևյալ բանաձևի.

$Q_{\Phi.Բ.} = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times P6 \times B) \times 106/3600$ տ/ժամ, որտեղ (նշված մեթոդակարգի աղյուսակ 1):

P1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, ընդունվում է 0.05

P2 – 0-50 մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0,

P4- գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.42

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – հանվող հողային զանգվածը:

Արևային կայանի շինարարության ժամանակ հանվող հողի ծավալը կկազմի՝ 496մ3 , հաշվի առնելով հողային զանգվածների միջին տեսակարար կշիռը՝ /818,4տ/ տ:

Ժամում հանվող տեղափոխվող գրունտի քանակը կկազմի՝

818տ : 416 ժամ/շին. ժամանակամիջոց = 1,97 տ/ժամ.:

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի թափման բարձրությունը, 0.6

$$Q_{\Phi.F.} = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.5 \times 1.97 \times 1.0 \times 0.6 \times 106/3600 = 0.066 \text{ գ/վրկ, կամ}$$

$$0,66 \times 3600 \times 416 : 106 = 0,988 \text{ տ/շին. ժամանակամիջոց:}$$

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործում

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում արտանետումները առաջանում են վառելիքի այրման արդյունքում: Հիմնականում օգտագործվում է դիզելային վառելիք:

Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի³ հիման վրա:

Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում դա ներկայացվում է դիզելային վառելիքով:

Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO2	CH	ՑOU	CO	N2O	CO24	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

³Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Core Inventory of Emissions in Europe” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան”

⁴ Ածխածնի երկօքսիդը, ըստ ՀՀ օրենսդրության, չի հանդիսանում վնասակար նյութ և ենթակա չէ նորմավորման, համապատասխանաբար հետագա հաշվարկներում հաշվի չի առվնել:

Շինարարության ընթացքում շահագործվելու են հորատող, հարթեցնող, ինքնաթափ մեքենաներ: Շինարարական տեխնիկան աշխատելու է շինարարության ընթացքում մոտ 1 ամիս (26 օր, 208 ժամ):

Հաշվի առնելով ստույգ նախագծային տվյալների բացակայությունը, հաշվարկների համար օգտագործվել են փորձագիտական գնահատականների հիման վրա ընդունված ցուցանիշները, ըստ որոնց դիզվառելիքի քանակները հետևյալն են ընդունվել.

- շինարարական տեխնիկա՝ 0.08 տ/օր, ընդամենը՝ 0.08 տ/օր x 26 օր = 2,08 տ;

Ընդամենը՝ 2,08 տ:

Արտանետումների հաշվարկները ըստ շահագործվող տեխնիկայի տեսակի բերված են աղյուսակ 2-ում:

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2 \Sigma ksb$, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 2,08 տ/շինժամ

$SO_2 = 2 \times 2,08 \times 0.002 = 0.32$ տ/ շին. ժամ կամ 0.0083 գ/վրկ:

Աղյուսակ 13. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը		Արտանետումները
-----------------	--	----------------

	Տեսակարար արտանետումները, գ/կգ	գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /208ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.101	0,0756
CH (ածխաջրածիններ)	0,243	0.000675	0.000505
NO2 (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.117	0,087
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.0119	0,0089
Ծմբային անհիդրիդ		0,0083	0,32
Անկազմակերպ փոշու արտանետում		0,066	0,988

Հավելված 9.

Վճարման անդորրագիրը

Վճարման հանձնարարական N 63449

Ամսաթիվ/Ժամ 30 մայիս 2024թ. 18:08 Կատարողի ՊԿ

Վճարող	«ԷԼԻՏ-ՔԼՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ		ԴԵԲԵՏ	Գումարը(թվերով)
SZS Կոդ	13 01024539	ՀՎՀՀ	h.N	
Վճարողի Բանկը	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Արմենիա» մասնաճյուղ	Կոդ	22041	220410515419000
Շահառու	ՀՀ ֆինանսների նախարարություն		ԿԴԵԴԻՏ	300,000.00 AMD
Կոդ			h.N	
Շահառուի Բանկ	ՀՀ կենտրոնական բանկ	Կոդ	10300	900005000196
	ք. Երևան			

Գումարը տառերով՝ Երեք հարյուր հազար Դրամ 00 լումա

Նպատակ՝ ԷԼԻՏ-ՔԼՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ, ՇՄԱԳ փորձարկություն

Շահառուին վճարման ամսաթիվ

Միջնորդավճար 100 ՀՀ դրամ

Կ.Տ. Հաճախորդի ստորագրությունները Ձևակերպված է ACBA-ONLINE համակարգով 31/05/2024



Գործարքի կոդ 120597755

Կատարման ամսաթիվ՝ 31/05/24

eFO 72-03-02/3#3

Հավելված 10

ՀՀ Վայոց ձորի մարզի Զատիթափ համայնքի Սարավան գյուղի վարչական սահմաններում «Էլիտ Քլսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքում ծրագրի իրականացման արդյունքում հնագիտական և պատմա-մշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գահատական-եզրակացություն

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի ակունքները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33 000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով,

որոնք զբաղեցնում են մոտ 20 000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են օրենքով և բաժանվում են տեղական և հանրապետական նշանակության: Դրանց մեջ հատկապես առանձնանում են թվով 80 համալիրներ, որոնք ունեն կարևորագույն պատմական, ճարտարապետական, գիտական, արվեստագիտական և մշակութային բացառիկ արժեք (ընդգրկում են մոտ 400 ճարտարապետական հուշարձաններ): Ոչ վաղ անցյալում դրանք ընդգրկված էին ԽՍՀՄ համամյութենական մշակութային և պատմական արժեք ներկայացնող հուշարձանների ցուցակում: Ներկայումս, ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակը, որը, սկսած 1963 թ. համալրվել է առավելքան 630 պատմական հուշարձաններով և բնության տարածքներով ամբողջ աշխարհում, ներառում է նաև Հայաստանի տարածքի որոշ հուշարձաններ: Դրանց շարքում են Հաղպատի վանական համալիրը, Սանահնի վանական համալիրը և միջնադարյան կամուրջը, Էջմիածինն իր բազմաթիվ հուշարձաններով, Զվարթնոցի տաճարը, Գեղարդավանքի համալիրը և Ազատ գետի վերին հատվածը: Հայաստանի տարածքի այլ հուշարձաններ ևս նախապատրաստվում են ընդգրկվելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցուցակներում, որոնք են՝ Նորավանքի վանական համալիրը, պարսկական Կապույտ մզկիթը և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը: Այդ պատճառով մշակութային ժառանգության գնահատումը և կառավարումը նման ծրագրերի իրականացման տարածքի համար գերակա խնդիր է և պահանջում է հնագետի փորձագիտական եզրակացություն: Հնագիտական փորձագիտության խնդիրներն են.

1. Բացահայտել ծրագրի իրականացման հնարավոր ազդեցությունները նյութական մշակույթի սկզբնաղբյուրների վրա, որոնք են շարժական և անշարժ հուշարձանները, հնավայրերը, կառուցվածքները և լանդշաֆտները, որոնք ունեն, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական, կրոնական, գեղագիտական կամ մշակութային նշանակություն;

2. Պատրաստել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության հնագիտական բաղկացուցիչը՝ ներառյալ կառավարման պլանը (ԿՊ-ն), որոնք երկուսն էլ կնախապատրաստվեն ծրագիրը իրականացնող մարմնի (ԻՄ) աջակցությամբ, որն է «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ -ն:

3. Կազմակերպել նախնական և դաշտային հետազոտություններ նախագծի իրականացման տարածքում առկա հնագիտական հուշարձանների համար, տեղորոշել և բնորոշել հայտնի և նոր հայտնաբերված հնավայրերը, հանդես գալ որոշակի առաջարկներով՝ կապված հուշարձանների վրա ազդեցության մեղմացման միջոցառումների մշակման հետ, որոնք պետք է արտացոլվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ և ԿՊ-ում: Ներկայացվող ՇՄԱԳ հաշվետվության մեջ ուսումնասիրված միավորները պետք է բաժանվեն երկու խմբի՝ հուշարձաններ, որոնք կրում են ծրագրի իրականացման անմիջական ազդեցությունը և հուշարձաններ, որոնք չեն ազդվում ուղղակիորեն կամ ազդվում են անուղղակիորեն: Բոլոր ազդվող հուշարձանների համար ծրագրի իրականացումից առաջ պետք է ներկայացվեն որոշակի եզրակացություններ, որոնք հնարավորություն կտան գնահատել նախագծի բացասական ազդեցությունը մշակութային միավորների և նրանց պատմա-աշխարհագրական միջավայրի վրա:

«Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 5307 մՎտ հզորությամբ արևային էներգակայան հիմնելու համար նախատեսված 6.20356 հա ընդհանուր մակերեսով տարածքը գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Զառիթափ համայնքի Սարավան գյուղի վարչական տարածքում (հողամասերի կադաստրային կոդը՝ 10-039-0307-0078)՝ համանուն բնակավայրից մոտ 2.5-3 կմ հարավ-արևելք (**Քարտեզներ 1 և 1ա**):

Երկրաբանական և երկրաձևաբանական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքն իրենից ներկայացնում է Վարդենիսի լեռնաշղթայի հարավ-արևելյան ստորոտներում՝ Արփայի վտակ Դարբ գետի ակունքների երկայնքով տարածվող բարձր լեռնային գոտու մի հատված, որը տեղ-տեղ ունի տափարակ՝ ստորին նիշերում գետերի ձորակներով կտրարտված ռելիեֆ: Նրան բնորոշ են սևահողային ծածկույթն ու ծովի մակերևույթից միջինում 2010-2020 մ բարձրության վրա գտնվող նոսր անտառակները, ծառա-թփուտային բուսականությունը և ալպյան մարգագետինները (**Լուսանկարներ 1-4**):

Ծրագրի իրականացման ազդեցության գոտում հայտնվող պատմա-մշակութային միավորների բացահայտման և տեղայնացման համար սկզբնական փուլում օգտվել ենք Հայաստանի Հանրապետության Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Վայոց ձորի մարզ (տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2003 թ., Հունիսի

26-ի, N754-Ն որոշման) փաստաթղթից, որտեղ Սարավան բնակավայրում 3.39. դասիչի տակ գրանացված է երեք հուշարձան՝ 12-17-րդ դդ. միջնադարյան գերեզմանոցը (դասիչ 3.39.1.), 13-14-րդ, 17-20-րդ դդ. միջնադարյան Դարբ կամ Թարփ գյուղատեղին (դասիչ 3.39.2.) և 19-րդ դ. եկեղեցին (դասիչ 3.39.3.), որոնք ուսումնասիրվող տարածքից գտնվում են նշանակալի հեռավորության վրա և արևային կայանի կառուցումը նրանց վրա որևէ կերպ ազդել չի կարող:

Բացի ցուցակներում ներառված հուշարձանները, անհրաժեշտ է տեղայնացնել տարբեր արշավախմբերի ուսումնասիրության շնորհիվ հայտնաբերված հնավայրերը, որոնք դոևս ընդգրկված չեն հուշարձանների պետական ցանկում, ունեն կամ չունեն նորահայտ հուշարձանի կարգավիճակ, սակայն անկախ դրանից, ենթակա են պահպանման պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքի Հոդված 20-ով. Նորահայտ հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը, որը սահմանում է՝ *պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտն ստանում է նորահայտ հուշարձանի կարգավիճակ և պահպանվում է մինչև հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նորահայտ հուշարձանը տնօրինող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել դրա անվթարությունը, իսկ պետության կողմից այն վերցնելու դեպքում սեփականատիրոջ կրած վնասը փոխհատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գտածոները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*

Չնայած նրան, որ ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում 19-21-րդ դդ. աշխատել են բազմաթիվ հնագիտական արշավախմբեր՝ խնդրո առարկա տարածքը նրանց աշխատանքներում չի ներառվել, ուստի որևէ տեղեկատվություն արխիվային փաստաթղթերում կամ հրատարակություններում առկա չէ:

Եվ վերջապես ս.թ. ապրիլի 12-ին իրականացվել է տարածքի դաշտային-հնագիտական հետազոտություն: Տեղանքի հնագիտական ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ


այն ժամանակին ենթարկվել է մելիորացիայի, որոշ հատվածներում հարթեցվել, և դատելով հարակից տարածքներում առկա գոմերի և այլ շինությունների մնացորներից՝ երկար տարիներ օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով (որպես արոտավայր): Ուստի, եթե այստեղ հնագիտական հուշարձաններ անգամ եղել են, ապա արտաքին նշաններ չեն պահպանվել (**Լուսանկարներ 5-6**): Ուսումնասիրության են ենթարկվել նաև տարածքում առկա կտրվածքները, ինչի արդյունքում պատմա-մշակութային որևէ միավոր կամ դրանց հետքեր չեն փաստագրվել:

Ամփոփելով ներկայացված տեղեկատվությունը կարող ենք նշել, որ Զատիթափ համայնքի Սարավան գյուղի վարչական սահմաններում «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայան հիմնելու համար նախատեսված, ընդհանուրը՝ 6.20356 հա մակերեսով տարածքը պատմա-մշակութային միավորների վրա հնաարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ այստեղ պատմա-մշակութային միավորներ չեն փաստագրվել:

Հայկ Հայդոսյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
Ինստիտուտ, Վաղ Հնագիտության Բաժնի
Կրտսեր գիտաշխատող



Բորիս Գասպարյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
Ինստիտուտ, Վաղ Հնագիտության Բաժնի
Գիտաշխատող



Դմիտրի Առաքելյան
ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտ
Գիտաշխատող




29.04.2024 թ.

Օգտագործված գրականության ցանկ

1. Պետական ցուցակ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների՝ Վայոց ձորի մարզ, Հավելված ՀՀ կառավարության 2003 թ., Հունիսի 26-ի, N754-Ն որոշման,
2. Геология Армянской ССР, т. I, Геоморфология, Ответственный редактор Н.В. Думитрашко, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1962;
3. Геология Армянской ССР, т. II, Стратиграфия, Ответственный редактор К.Н. Паффенгольц, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1964.


Քարտեզներ և լուսանկարներ

Քարտեզ 1



Զառիթափի համայնքի Սարավան գյուղի վարչական սահմաններում գտնվող «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված 6.20356 հա ընդհանուր մակերեսով տարածքը


Քարտեզ 1ա



Զառիթափ համայնքի Սարավան գյուղի վարչական սահմաններում գտնվող «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված 6.20356 հա ընդհանուր մակերեսով տարածքը



Լուսանկար 1. «Էլիտ Քնսթրաքշն» ընկերության կողմից Զառիթափի համայնքի Սարավան գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքը (օդալուսանկար)



Լուսանկար 2. «Էլիտ Քնսթրաքշն» ընկերության կողմից Զառիթափի համայնքի Սարավան գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի արևմտյան հատվածը (օդալուսանկար)



Լուսանկար 3. «Էլիտ Քնսթրաքշն» ընկերության կողմից Ջառիթափի համայնքի Սարավան գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի արևելյան հատվածը (օդալուսանկար)



Լուսանկար 4. Ուսումնասիրվող տարածքի ծառա-թփուտային բուսականությունը՝ ալպյան մարգագետինների երկայնքով



Լուսանկար 5. «Էլիտ Քնաթարաքշն» ընկերության կողմից Սարավանի արևային կայանի շինարարության համար ընտրված տարածքից հարավ ընկած՝ կառուցապաման մնացորդներ



Լուսանկար 6. «Էլիտ Քնաթարաքշն» ընկերության կողմից Սարավանի արևային կայանի շինարարության համար ընտրված տարածքի հարավային կողմում առկա կառուցապաման մնացորդներ

